1881 Հեջավորման ածանցյալ գործիքներ (դրամական հոսքի հեջ)
1882 Հեջավորման այլ գործիքներ
189 Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև
1890 Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև

19 Ստացվելիք գումարներ

190 Դեբիտորական պարտքեր
1900 Դեբիտորական պարտքեր

191 Կանխավճարներ

1910 Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին

1911 Կանխավճարներ և գերավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով

1912 Ապագա ժամանակաշրջանի ծախսեր

192 Ստացվելիք շահաբաժիններ ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից

1920 Ասոցիացված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ

1921 Դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ

1922 Համատեղ վերահսկվող միավորումներում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ

193 Ստացվելիք այլ գումարներ

1930 Ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք այլ տոկոսներ և միջնորդավճարներ

1931 Ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք այլ գումարներ

1932 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացվելիք այլ տոկոսներ և միջնորդավճարներ

1933 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացվելիք այլ գումարներ

194 Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

1940 Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

20 Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ

200 Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ

2000 Ասոցիացված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ

2001 Դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ

2002 Համատեղ վերահսկվող միավորներում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ

201 Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ինքնարժեքով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ

2010 Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ինքնարժեքով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ

21 Հիմնական միջոցներ

210 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ

2100 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ

2101 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածություն

2102 Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեզրկում

211 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ

2110 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ

2111 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածություն

2112 Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների արժեզրկում

22 Ոչ նյութական ակտիվներ

220 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2200 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2201 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

2202 Շահագործման մեջ գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների արժեզրկում

221 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2210 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2211 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիա

2212 Շահագործումից դուրս գտնվող որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկում

222 Շահագործման մեջ գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2220 Շահագործման մեջ գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2221 Շահագործման մեջ գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվների արժեզրկում

223 Շահագործումից դուրս գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2230 Շահագործումից դուրս գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվներ

2231 Շահագործումից դուրս գտնվող անորոշ օգտակար ժամկետով ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկում

23 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

230 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

2300 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

24 Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում

240 Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում

2400 Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում

241 Կապիտալ ներդրումներ կազմակերպության ոչ նյութական ակտիվներում

2410 Կապիտալ ներդրումներ կազմակերպության ոչ նյութական ակտիվներում

242 Կապիտալ ներդրումներ կազմակերպության վարձակալված հիմնական միջոցներում

2420 Կապիտալ ներդրումներ կազմակերպության վարձակալված հիմնական միջոցներում

2421 Վարձակալված հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների մաշվածություն

25 Այլ ակտիվներ

250 Պաշարներ

2500 Արագամաշ առարկաներ

2501 Այլ պաշարներ

251 Թանկարժեք քարեր

2510 Թանկարժեք քարեր

252 Հուշադրամներ

2520 Հուշադրամներ

253 Բռնագանձված գրավ

2530 Բռնագանձված գրավ

254 Սառեցված հաշիվներ

2540 Սառեցված հաշիվներ

255 Հետաձգված հարկային ակտիվներ

2550 Հետաձգված հարկային ակտիվներ

256 Ներդրումային գույք

2560 Ներդրումային գույք

257 Հաշվարկված տույժեր և տուգանքներ

2570 Հաշվարկված տույժեր և տուգանքներ

258 Այլ ակտիվներ

2580 Այլ ակտիվներ

Գուդվիլ (որն ի հայտ է եկել դուստր ընկերության ձեռքբերման հետևանքով կամ ասոցիացված կազմակերպությունում ներդրման հետևանքով)

Ընդամենը ակտիվներ

ԿԱՐԳ 3-4. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30 Թղթակցային և բանկային հաշիվներ

300 Թղթակցային և բանկային հաշիվներ

3000 Բանկերի թղթակցային հաշիվներ

3001 Ֆինանսական կազմակերպությունների բանկային հաշիվներ

3002 Ֆինանսական կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

301 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպությունների թղթակցային և բանկային հաշիվներ

3010 Բանկի հետ կապված բանկերի թղթակցային հաշիվներ

3011 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպությունների բանկային հաշիվներ

3012 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

302 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց բանկային հաշիվներ

3020 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների բանկային հաշիվներ

3021 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ոչ առևտրային կազմակերպությունների բանկային հաշիվներ

3022 Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվներ

3023 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

3024 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ոչ առևտրային կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

3025 Այլ անձանց թանկարժեք մետաղներով հաշիվներ

303 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց բանկային հաշիվներ

3030 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների բանկային հաշիվներ

3031 Բանկի հետ կապված ոչ առևտրային կազմակերպությունների բանկային հաշիվներ

3032 Բանկի հետ կապված այլ անձանց բանկային հաշիվներ

3033 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

3034 Բանկի հետ կապված ոչ առևտրային կազմակերպությունների թանկարժեք մետաղներով հաշիվներ

3035 Բանկի հետ կապված այլ անձանց թանկարժեք մետաղներով հաշիվներ

31 Պարտավորություններ կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ

310 Պարտավորություններ կենտրոնական բանկերի նկատմամբ

3100 Կենտրոնական բանկերից ստացված վարկեր

3101 Կենտրոնական բանկերից ներգրավված ավանդներ

311 Պարտավորություններ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովության հիմնադրամի նկատմամբ

3110 Ծրագրերի իրականացման գրասենյակների հաշիվներ

3111 Վարկեր գանձապետարանից

3112 Այլ պարտավորություններ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովության հիմնադրամի նկատմամբ

32 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

320 Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդներ

3200 Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդներ

3201 Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդներ

3202 Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված թանկարժեք մետաղներով ավանդներ

321 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդներ

3210 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդներ

3211 Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդներ

3212 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ներգրավված թանկարժեք մետաղներով ավանդներ

322 Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ

3220 Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր

3221 Ֆինանսական կազմակերպություններից ստացված ցպահանջ փոխառություններ

3222 Ֆինանսական կազմակերպություններից ստացված ժամկետային փոխառություններ

3223 Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ

323 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ

3230 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր

3231 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ստացված ցպահանջ փոխառություններ

3232 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ստացված ժամկետային փոխառություններ

324 Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների գծով

3240 Կարճաժամկետ պարտավորություններ բանկերի նկատմամբ արտարժույթի առքուվաճառքի և այլ հաշվարկների գծով

33 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ

330 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներգրավված ավանդներ

3300 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդներ

3301 Հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդներ

3302 Այլ անձանցից ներգրավված ցպահանջ ավանդներ

3303 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդներ

3304 Հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդներ

3305 Այլ անձանցից ներգրավված ժամկետային ավանդներ

3306 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներգրավված թանկարժեք մետաղներով ավանդներ

331 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներգրավված ավանդներ

3310 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդներ

3311 Կազմակերպության հետ կապված հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդներ

3312 Կազմակերպության հետ կապված այլ անձանցից ներգրավված ցպահանջ ավանդներ

3313 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդներ

3314 Կազմակերպության հետ կապված հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդներ

3315 Կազմակերպության հետ կապված այլ անձանցից ներգրավված ժամկետային ավանդներ

3316 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներգրավված թանկարժեք մետաղներով ավանդներ

332 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացված փոխառություններ

3320 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող կազմակերպություններից ստացված ցպահանջ փոխառություններ

3321 Հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ցպահանջ փոխառություններ

3322 Այլ անձանցից ստացված ցպահանջ փոխառություններ

3323 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող կազմակերպություններից ստացված ժամկետային փոխառություններ

3324 Հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ժամկետային փոխառություններ

3325 Այլ անձանցից ստացված ժամկետային փոխառություններ

333 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացված փոխառություններ

3330 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող կազմակերպություններից ստացված ցպահանջ փոխառություններ

3331 Կազմակերպության հետ կապված հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ցպահանջ փոխառություններ

3332 Կազմակերպության հետ կապված այլ անձանցից ստացված ցպահանջ փոխառություններ

3333 Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող կազմակերպություններից ստացված ժամկետային փոխառություններ

3334 Կազմակերպության հետ կապված հիմնարկներից և ոչ առևտրային կազմակերպություններից ներգրավված ժամկետային փոխառություններ

3335 Կազմակերպության հետ կապված այլ անձանցից ստացված ժամկետային փոխառություններ

334 Մասնակիցներից ստացված ավանդներ

3340 Մասնակիցներից ստացված ցպահանջ ավանդներ

3341 Մասնակիցներից ստացված ժամկետային ավանդներ

3342 Մասնակիցներից ներգրավված թանկարժեք մետաղներով ավանդներ

335 Մասնակիցներից ստացված փոխառություններ

3350 Մասնակիցներից ստացված ցպահանջ փոխառություններ

3351 Մասնակիցներից ստացված ժամկետային փոխառություններ

336 Ներդրումային ծառայությունների մատուցման և ներդրումային ֆոնդերի կառավարման շրջանակներում հաճախորդներից/մասնակիցներից ստացված գումարներ

3360 Արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում հաճախորդներից ստացված գումարներ

3361 Բրոքերային ծառայությունների շրջանակներում հաճախորդներից ստացված գումարներ

3362 Ներդրումային ֆոնդերի կառավարման շրջանակներում մասնակիցներից ստացված գումարներ

337 Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով կառավարիչներին վճարելիք պարգևավճարներ

3370 Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով կառավարիչներին վճարելիք պարգևավճարներ

34 Ռեպո համաձայնագրեր

340 Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ

3400 Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ

341 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ

3410 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ

342 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ

3420 Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ

3421 Ռեպո համաձայնագրեր հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ

3422 Ռեպո համաձայնագրեր այլ անձանց հետ

35 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով

350 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

3500 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի նկատմամբ

3501 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով բանկերի նկատմամբ

3502 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով վարկային կազմակերպությունների նկատմամբ

3503 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով ներդրումային ընկերությունների նկատմամբ

3504 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով ապահովագրական ընկերությունների նկատմամբ

3505 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

351 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ

3510 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3511 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3512 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով հիմնարկների նկատմամբ

3513 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պետական ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3514 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով այլ ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3515 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով ֆիզիկական անձանց նկատմամբ

3516 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով անհատ ձեռնարկատերերի նկատմամբ

3517 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով այլ անձանց նկատմամբ

352 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով

3520 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով կենտրոնական բանկերի նկատմամբ

3521 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

3522 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3523 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3524 Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով այլ անձանց նկատմամբ

353 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

3530 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի նկատմամբ

3531 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով բանկերի նկատմամբ

3532 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով վարկային կազմակերպությունների նկատմամբ

3533 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով ներդրումային ընկերությունների նկատմամբ

3534 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով ապահովագրական ընկերությունների նկատմամբ

3535 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

354 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ

3540 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3541 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3542 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով հիմնարկների նկատմամբ

3543 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով պետական ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3544 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով այլ ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3545 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով ֆիզիկական անձանց նկատմամբ

3546 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով անհատ ձեռնարկատերերի նկատմամբ

3547 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով այլ անձանց նկատմամբ

355 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով

3550 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով կենտրոնական բանկերի նկատմամբ

3551 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

3552 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3553 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ

3554 Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով այլ անձանց նկատմամբ

36 Հաշվարկային պարտավորություններ վճարային փաստաթղթերով

360 Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով

3600 Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով

361 Հաշվարկային պարտավորություններ ակրեդիտիվների գծով

3610 Հաշվարկային պարտավորություններ ֆինանսական կազմակերպություններին տրված ակրեդիտիվների գծով

3611 Հաշվարկային պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց տրված ակրեդիտիվների գծով

362 Հաշվարկային պարտավորություններ սառեցված ակրեդիտիվների գծով

3620 Հաշվարկային պարտավորություններ ֆինանսական կազմակերպություններին տրված սառեցված ակրեդիտիվների գծով

3621 Հաշվարկային պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց տրված սառեցված ակրեդիտիվների գծով

37 Կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր, առևտրային և հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ և այլ պարտավորություններ

370 Կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր

3700 Կազմակերպության կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատներ

371 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ

3710 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ

372 Առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ

3720 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ

3721 Առևտրային կազմակերպությունների հետ կնքված առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ

3722 Հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ

3723 Այլ անձանց հետ կնքված առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ

373 Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորություններ

3730 Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորություններ

374 Հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ

3740 Հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ-իրական արժեքի հեջ

3741 Հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ-դրամական հոսքի հեջ

3742 Հեջավորման այլ գործիքներ

38 Այլ գործառնությունների գծով վճարման ենթակա գումարներ

380 Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ

3800 Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ

381 Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր

3810 Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր

382 Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով վճարվելիք գումարներ

3820 Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով այլ անձանց վճարվելիք գումարներ

383 Արժեթղթերի պահառության գծով վճարվելիք գումարներ

3830 Արժեթղթերի պահառության գծով այլ անձանց վճարվելիք գումարներ

384 Վճարման ենթակա շահաբաժիններ

3840 Վճարման ենթակա շահաբաժիններ

385 Պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով

3850 Պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով

3851 Պարտավորություններ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով

386 Պարտավորություններ ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով

3860 Պարտավորություններ ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով

387 Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ

3870 Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ

39 Կրեդիտորական պարտքեր

390 Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև

3900 Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև

391 Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով

3910 Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով

3911 Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով

392 Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր

3920 Ներքին կրեդիտորական պարտքեր

3921 Արտաքին կրեդիտորական պարտքեր

3922 Ստացված կանխավճարներ

3923 Կրեդիտորական պարտքեր կանոնադրական հիմնադրամի համալրման գծով

393 Տարանցիկ հաշիվներ

3930 Տարանցիկ հաշիվներ

40 Հետաձգված հարկային պարտավորություններ

400 Հետաձգված հարկային պարտավորություններ

4000 Հետաձգված հարկային պարտավորություններ

41 Ակտիվներին վերաբերող շնորհներ

410 Ակտիվներին վերաբերող շնորհներ

4100 Ակտիվներին վերաբերող շնորհներ

42 Պահուստներ

420 Պահուստներ

4200 Պահուստներ

43 Այլ պարտավորություններ

430 Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների գծով

4300 Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների գծով

431 Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունների գծով

4310 Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների գծով

4311 Այլ պարտավորություններ հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների գծով

4312 Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ անձանց գծով

432 Այլ պարտավորություններ կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպությունների գծով

4320 Այլ պարտավորություններ կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպությունների գծով

433 Այլ պարտավորություններ կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով

4330 Այլ պարտավորություններ կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների գծով

4331 Այլ պարտավորություններ կազմակերպության հետ կապված հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների գծով

4332 Այլ պարտավորություններ կազմակերպության հետ կապված այլ անձանց գծով

Ընդամենը պարտավորություններ

ԿԱՐԳ 5. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

50 Կանոնադրական հիմնադրամ

500 Բաժնետոմսեր

5000 Սովորական բաժնետոմսեր

50000 Սովորական բաժնետոմսեր - անվանական արժեք

50001 Սովորական բաժնետոմսեր - էմիսիոն եկամուտ

50002 Սովորական բաժնետոմսեր - զեղչ

5001 Արտոնյալ բաժնետոմսեր

50010 Արտոնյալ բաժնետոմսեր - անվանական արժեք

50011 Արտոնյալ բաժնետոմսեր - էմիսիոն եկամուտ

50012 Արտոնյալ բաժնետոմսեր - զեղչ

501 Բաժնեմասեր և փայամասնակցություններ

5010 Բաժնեմասեր և փայամասնակցություններ

50100 Բաժնեմասեր

50101 Փայամասնակցություններ

51 Հետգնված և չվճարված կապիտալ

510 Հետգնված կապիտալ

5100 Հետգնված բաժնետոմսեր

51000 Հետգնված սովորական բաժնետոմսեր

51001 Հետգնված արտոնյալ բաժնետոմսեր

5101 Հետգնված բաժնեմասեր և փայամասնակցություններ

51010 Հետգնված բաժնեմասեր

51011 Հետգնված փայամասնակցություններ

511 Չվճարված կապիտալ

5110 Չվճարված բաժնետոմսեր

51100 Թողարկված և չտեղաբաշխված սովորական բաժնետոմսեր

51101 Տեղաբաշխված և չվճարված արտոնյալ բաժնետոմսեր

5111 Չվճարված բաժնեմասեր և փայամասնակցություններ

51110 Թողարկված և չտեղաբաշխված գնված բաժնեմասեր

51111 Տեղաբաշխված և չվճարված գնված բաժնեմասեր

51112 Թողարկված և չտեղաբաշխված փայամասնակցություններ

51113 Տեղաբաշխված և չվճարված փայամասնակցություններ

52 Համապարփակ եկամուտ

520 Չբաշխված շահույթ

5200 Չբաշխված շահույթ

52000 Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ կամ վնաս

52001 Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ կամ վնաս

5201 Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում

52010 Էական սխալների ուղղման արդյունքում առաջացած ճշգրտում

52011 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած ճշգրտում

521 Այլ համապարփակ եկամուտ

5210 Այլ համապարփակ եկամուտ

52100 Շենքերի և շինությունների վերագնահատումից աճ

52101 Այլ հիմնական միջոցների վերագնահատումից աճ

52102 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթով կամ վնաս

52103 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթով կամ վնաս

52104 Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից աճ

52105 Արտերկրյա գործառնության վերահաշվարկից փոխարժեքային տարբերություն

52106 Դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատումից աճ

52107 Այլ համապարփակ եկամուտ

53 Գլխավոր պահուստ

530 Գլխավոր պահուստ

5300 Գլխավոր պահուստ

53000 Գլխավոր պահուստ

54 Կապիտալի այլ հոդվածներ

540 Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ

5400 Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ

54000 Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ

541 Կապիտալի այլ հոդվածներ

5410 Կապիտալի այլ հոդվածներ

54100 Կապիտալի այլ հոդվածներ

Դուստր ընկերության կապիտալում չվերահսկող բաժնեմասը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ

Ընդամենը կապիտալ

«Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ներդրողների համար կենսաթոշակային ֆոնդերի գնահատման և համեմատման համար միասնական չափանիշ, ինչպես նաև ապահովել կենսաթոշակային ֆոնդերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողությունը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել «Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 մարտի 2012 թ., N 62-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/17

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է կամավոր և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի (այսուհետ՝ ֆոնդ) ակտիվների եկամտաբերության հաշվարկման մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները:

2. Սույն կանոնակարգի 3-րդ գլխի պահանջները չեն տարածվում նոր ստեղծված ֆոնդերի վրա՝ ֆոնդի ստեղծման պահից մեկ տարվա ընթացքում:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մարտի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.2012 թ. (ՀՀԳՏ N11 (424), 16.04.2012):

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***Ֆոնդի եկամտաբերություն***՝ ֆոնդի փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխություն՝ արտահայտված տոկոսներով,

2) ***ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց ֆոնդի ակտիվների եկամտաբերություն***՝ ցուցանիշ է, որը ցույց է տալիս նախորդ ժամանակահատվածներում ֆոնդի եկամտաբերության և դրա առաջացման հետ կապված ռիսկի միջև հարաբերությունը:

4. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և/կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունները:

ԳԼՈՒԽ 3. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

5. Ֆոնդի կառավարիչն իր կողմից կառավարվող ֆոնդերի ակտիվների եկամտաբերության մասին տեղեկատվությունը ներկայացնում է սույն կանոնակարգի 6-րդ կետով նախատեսված ցուցանիշների ձևով:

6. Ֆոնդի կառավարիչն իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի համար յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ (այսուհետ՝ հաշվարկման օր) հաշվարկում է հետևյալ ցուցանիշները.

1) հաշվարկման օրվա ֆոնդի եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված բանաձևի,

2) տվյալ տարվա սկզբից մինչև հաշվարկման օրն ընկած ժամանակահատվածում ֆոնդի եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված բանաձևի,

3) հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների համար ֆոնդի եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված բանաձևի, և հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 9-րդ կետում նշված բանաձևի,

4) հաշվարկման օրվան նախորդող հինգ տարիների համար ֆոնդի միջին տարեկան եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված բանաձևի,

5) գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար (ստեղծման պահից) ֆոնդի տարեկան միջին եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված բանաձևի:

ԳԼՈՒԽ 4. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

7. Սույն կանոնակարգի 6-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված Ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ե = \left[\frac{ՓՀԱ_1}{ՓՀԱ_0} - 1\right] * 100\%$$,

որտեղ՝ Ե-ն ֆոնդի եկամտաբերությունն է հաշվարկվող ժամանակահատվածի համար,

$ՓՀԱ_0$-ն հաշվարկվող ժամանակահատվածի առաջին օրվան նախորդող առաջին աշխատանքային օրվա համար հաշվարկված փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է,

$ՓՀԱ_1$-ը փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է հաշվարկվող ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ,

8. Սույն կանոնակարգի 6-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված Ֆոնդի եկամտաբերությունները հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$Ե = \left[\left(\frac{ՓՀԱ_1}{ՓՀԱ_0}\right)^{\frac{1}{K}} - 1\right] * 100\%$$,

որտեղ՝ Ե-ն ֆոնդի եկամտաբերությունն է հաշվարկվող ժամանակահատվածի համար,

$ՓՀԱ_0$-ն փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է հաշվարկվող ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ,

$ՓՀԱ_1$-ը փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է հաշվարկվող ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ,

K-ն հաշվարկվող ժամանակահատվածն է արտահայտված տարիներով:

ԳԼՈՒԽ 5. ՌԻՍԿԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԻԱՎՈՐԻ ԴԻՄԱՑ ՖՈՆԴԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

9. Սույն կանոնակարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՌԵ = \frac{Ե - Ե_{պկպ}}{\sigma},$$

որտեղ՝ 1) ՌԵ-ն ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց ֆոնդի եկամտաբերությունն է հաշվարկվող ժամանակահատվածի համար,

2) Ե-ն ֆոնդի եկամտաբերությունն է հաշվարկվող ժամանակահատվածի համար՝ արտահայտված միավորի մասերով,

3) Ե$_{պկպ}$-ն հաշվարկվող ժամանակահատվածին նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ շրջանառության մեջ գտնվող՝ մինչև մեկ տարի մարման ժամկետով Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունն է արտահայտված միավորի մասերով, ինչը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի կողմից: Այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը չի հրապարակում վերոնշյալ ցուցանիշը, Ե$_{պկպ}$-ի հաշվարկման համար հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող եկամտաբերության կորով հաշվարկվող՝ շրջանառության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը,

4) σ-ն ֆոնդի գործունեության վերջին հինգ տարիների համար (գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար, եթե ֆոնդը գործում է հինգ տարուց պակաս) ֆոնդի եկամտաբերության ստանդարտ շեղումն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\sigma = \sqrt{\frac{1}{N-1}\sum_{i=1}^{N}(Ե_i - \mu)^2}$$

որտեղ՝ 5) μ-ն ֆոնդի գործունեության վերջին հինգ տարիների համար (գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար, եթե ֆոնդը գործում է հինգ տարուց պակաս) ֆոնդի եկամտաբերությունների միջինն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\mu = \frac{1}{N}\sum_{i=1}^{N} Ե_i$$

որտեղ՝ 6) Ե$_i$-ն սույն կանոնակարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված և սույն կանոնակարգի 7-րդ կետի համաձայն հաշվարկված ֆոնդի եկամտաբերությունն է արտահայտված միավորի մասերով i-երորդ ժամանակահատվածի համար,

7) N-ը ֆոնդի գործունեության վերջին հինգ տարիների (գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար, եթե ֆոնդը գործում է հինգ տարուց պակաս)՝ սույն կանոնակարգի 7-րդ կետի համաձայն հաշվարկված ֆոնդի եկամտաբերությունների հաշվարկների քանակն է:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ներդրողների համար ֆոնդերի գնահատման և համեմատման համար միասնական չափանիշ, ինչպես նաև ապահովել ֆոնդերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետի 23-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել 23-րդ և 24-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«23) ֆոնդի եկամտաբերություն՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ի:

24) հաշվարկման օր՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ի:»:

3) Կանոնակարգի 4-րդ կետի 10-րդ և 11-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

4) Կանոնակարգի 56.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«56.1. ֆոնդերի գծով տեղեկություններում ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) Պայմանագրային բաց ֆոնդերը տեղեկատվությունը ներկայացնում են համաձայն հավելված 12-ով սահմանված աղյուսակի, որում.

ա. «Օր/ամիս/տարի դրությամբ» տողում թավ տառերով լրացվում է հաշվարկման օրվա ամսաթիվը (օր, ամիս, տարեթիվ), որի դրությամբ ներկայացվում են աղյուսակում նշված տեղեկությունները,

բ. «Ֆոնդի անվանումը» սյունակում լրացվում են միևնույն կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերի անվանումները,

գ. «Փայի դասը» սյունակում լրացվում է ֆոնդի փայի դասը, ընդ որում, եթե տվյալ ֆոնդը չունի տարբեր դասի փայեր, ապա նշվում է «-»,

դ. «Փայի հաշվարկային արժեքը» սյունակում լրացվում է ֆոնդի փայի հաշվարկային արժեքը հաշվարկման օրվա դրությամբ,

ե. «Ֆոնդի եկամտաբերությունը» տողի համապատասխան սյունակներում լրացվում են ֆոնդի եկամտաբերության ցուցանիշները, ընդ որում՝

1) «մեկ օրվա» սյունակում լրացվում է հաշվարկման օրվա եկամտաբերությունը,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մարտի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.2012 թ. (ՀՀԳՏ N11 (424), 16.04.2012):

2) «տարվա սկզբից» սյունակում լրացվում է հաշվարկման տարվա սկզբից մինչև հաշվարկման օրն ընկած ժամանակահատվածի եկամտաբերությունը,
3) «վերջին 12 ամիսների» սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների եկամտաբերությունը,
4) «վերջին 5 տարիների (միջին տարեկան)» սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը,
5) «ստեղծման պահից (միջին տարեկան)» սյունակում լրացվում է ֆոնդի գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի (ստեղծման պահից մինչև հաշվարկման օրը ներառյալ) միջին տարեկան եկամտաբերությունը,
6) «վերջին 12 ամիսների համար ռիսկի միավորի դիմաց եկամտաբերությունը» սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների՝ ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց եկամտաբերությունը:

2) Կորպորատիվ բաց ֆոնդերը տեղեկատվությունը ներկայացնում են համաձայն հավելված 13-ով սահմանված աղյուսակի, որում.

ա. «Օր/ամիս/տարի դրությամբ» տողում թավ տառերով լրացվում է հաշվարկման օրվա ամսաթիվը (օր, ամսի, տարեթիվ), որի դրությամբ ներկայացվում են աղյուսակում նշված տեղեկությունները,

բ. «Ֆոնդի անվանումը» սյունակում լրացվում են միևնույն կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերի անվանումները,

գ. «Բաժնետոմսի հաշվարկային արժեքը» սյունակում լրացվում է ֆոնդի բաժնետոմսի հաշվարկային արժեքը՝ հաշվարկման օրվա դրությամբ,

դ. «Ֆոնդի եկամտաբերությունը» տողի համապատասխան սյունակներում լրացվում են ֆոնդի եկամտաբերության ցուցանիշները, ընդ որում՝

1) «մեկ օրվա» սյունակում լրացվում է հաշվարկման օրվա եկամտաբերությունը,
2) «տարվա սկզբից» սյունակում լրացվում է հաշվարկման տարվա սկզբից մինչև հաշվարկման օրն ընկած ժամանակահատվածի եկամտաբերությունը,
3) «վերջին 12 ամիսների» սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների եկամտաբերությունը,
4) «վերջին 5 տարիների (միջին տարեկան)» սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը,
5) «ստեղծման պահից (միջին տարեկան)» սյունակում լրացվում է ֆոնդի գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի (ստեղծման պահից մինչև հաշվարկման օրը ներառյալ) միջին տարեկան եկամտաբերությունը,
6) «վերջին 12 ամիսների համար ռիսկի միավորի դիմաց եկամտաբերությունը» սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների՝ ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց եկամտաբերությունը:

3) Սույն կանոնակարգի 56.1 կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված տեղեկությունները հրապարակվում են յուրաքանչյուր աշխատանքային օր, սակայն ոչ ուշ, քան համապատասխան հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

4) Սույն կանոնակարգի հավելված 12-ով և հավելված 13-ով սահմանված աղյուսակներում ներկայացվող եկամտաբերության ցուցանիշները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ով սահմանված կարգով:

5) Սույն կանոնակարգի հավելված 12-ով և հավելված 13-ով սահմանված աղյուսակների եկամտաբերությանը վերաբերող սյունակները լրացնելիս, եթե համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվա համար փայի հաշվարկային արժեքի ցուցանիշը բացակայում է, ապա եկամտաբերությունը հաշվարկելիս հիմք է ընդունվում նախորդ աշխատանքային օրվա ցուցանիշը՝ բացառությամբ այն ժամանակահատվածի, երբ ֆոնդը գործունեություն չի ծավալել և չի հաշվարկել ֆոնդի փայի հաշվարկային արժեքը:

6) Սույն կանոնակարգի հավելված 12-ով և հավելված 13-ով սահմանված Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշներ հրապարակելիս ներկայացվում են նաև հետևյալ պարտադիր տեղեկությունները.

ա. հավելված 12-ով և հավելված 13-ով աղյուսակներում ներառված ցուցանիշների նկարագրությունը, որը ներկայացվում է առանձին բացվող պատուհանի տեսքով կամ ցուցանիշ-

ների նկարագրությունը պարունակող փաստաթղթին հղման միջոցով կամ օգտագործողին մատչելի այլ միջոցով,

բ. աղյուսակների ներքևում թավ տառերով ներկայացվում է նախազգուշական դրույթ այն մասին, որ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ նախկինում ցուցաբերած վարքագիծը կամ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ դրանք շարունակվելու են նաև ապագայում,

գ. նշում այն մասին, որ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշները ներառում են ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը (այդ թվում՝ ֆոնդի հարկերը),

դ. այն աղբյուրները, որտեղից մասնակիցը կարող է առավել մանրամասն տեղեկություններ ստանալ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ:

7) Եթե ֆոնդի կառավարիչը հրապարակում է տեղեկություններ իր կողմից կառավարվող փակ կամ միջակայքային ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ, ապա այդ դեպքում ֆոնդի եկամտաբերությունը պետք է հաշվարկվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ի 4-րդ և 5-րդ գլուխներով սահմանված բանաձևերով: Ընդ որում, ֆոնդի եկամտաբերության ցանկացած ցուցանիշ հրապարակելիս պետք է նշվի նաև այն ժամանակահատվածը, որի համար հաշվարկվել է ֆոնդի եկամտաբերությունը:

8) Եթե ֆոնդի կառավարիչը կատարում է իր կողմից կառավարվող ֆոնդի եկամտաբերության համեմատություն իմաստալից հենանիշի հետ, ապա այդ իմաստալից հենանիշը միաժամանակ պետք է բավարարի հետևյալ պայմանները.

ա. պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա սպառողին համեմատել կառավարման արդյունավետությունն այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են ֆոնդի ներդրումային քաղաքականությանը,

բ. չպետք է հիմնվի տվյալ կառավարչի՝ անցյալում ձեռք բերված եկամտաբերության կամ տվյալ կառավարչի ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա:

9) Ընդ որում, նշված իմաստալից հենանիշը կարող է հիմնվել նաև բորսայական ինդեքսների, բանկային ավանդների, այլ կառավարիչների կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման արդյունավետությունն արտահայտող ամփոփ ցուցանիշների, համանման գործիքների որոշակի խմբի համար հաշվարկված միջին եկամտաբերության և նմանատիպ այլ ցուցանիշների վրա:»:

5) Կանոնակարգի 56.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«56.5. Ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքի յուրաքանչյուր ֆոնդի էջում պետք է գրաֆիկորեն ներկայացվի ֆոնդի եկամտաբերությունն առնվազն վերջին 5 տարիների համար, իսկ, եթե ֆոնդը գործում է 5 տարուց պակաս, ապա ֆոնդի եկամտաբերությունը ֆոնդի գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար: Ընդ որում, պետք է հնարավոր լինի տեսնել բաց ֆոնդի եկամտաբերությունը ցանկացած ժամանակահատվածի համար:»:

6) Կանոնակարգի Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

7) Կանոնակարգի Հավելված 13-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 մարտի 2012 թ., N 63-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 63-Ն որոշմամբ

Հավելված 12
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

Օր/ամիս/տարի դրությամբ								
Ֆոնդի անվանումը	**Փայի դասը**	**Փայի հաշվարկային արժեքը**	**Ֆոնդի եկամտաբերությունը**					**Վերջին 12 ամիսների համար ռիսկի միավորի դիմաց եկամտաբերությունը**
			մեկ օրվա	տարվա սկզբից	վերջին 12 ամիսների	վերջին 5 տարիների (միջին տարեկան)	ստեղծման պահից (միջին տարեկան)	

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 63-Ն որոշմամբ

Հավելված 13
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

Օր/ամիս/տարի դրությամբ							
Ֆոնդի անվանումը	**Բաժնետոմսի հաշվարկայի ն արժեքը**	**Ֆոնդի եկամտաբերությունը**					**Վերջին 12 ամիսների համար ռիսկի միավորի դիմաց եկամտաբերությունը**
		մեկ օրվա	տարվա սկզբից	վերջին 12 ամիսների	վերջին 5 տա-րիների (միջին տարեկան)	ստեղծման պահից (միջին տարեկան)	

Որակավորված ներդրողների ֆոնդում որակավորված ներդրող չհամարվող ներդրողների կողմից ձեռք բերվող փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր արժեքի նվազագույն մեծությունը սահմանելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել որակավորված ներդրողների ֆոնդում որակավորված ներդրող չհամարվող ներդրողների մասնակցության չափը, հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի «բ» պարբերությունը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Սահմանել, որ որակավորված ներդրողների ֆոնդում որակավորված ներդրող չհամարվող յուրաքանչյուր ներդրողի կողմից ձեռք բերվող փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր արժեքի նվազագույն մեծությունը կազմում է 20 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ՝ յուրաքանչյուր առանձին առաջարկի դեպքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 մարտի 2012 թ., N 64-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մարտի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.2012 թ. (ՀՀԳՏ N11(424), 16.04.2012):

*«Համահայկական բանկի գործունեության կարգավորումը և տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 01/03-ը հաստատելու մասին**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համահայկական բանկն իրավունք ունի իրականացնել օրենքով սահմանված բանկային գործունեություն, որի ընթացքում կարող են առաջանալ ռիսկեր, և կարևորելով այդ ռիսկերի զսպման անհրաժեշտությունը,

Նպատակ ունենալով ապահովել Համահայկական բանկի ֆինանսական կայունությունը և նվազեցնել ստանձնած ռիսկերի գծով Համահայկական բանկի հնարավոր կորուստները,

հիմք ընդունելով «Համահայկական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Համահայկական բանկի գործունեության կարգավորումը և տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 01/03-ը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի մայիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 մարտի 2012 թ., N 65-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 65-Ն որոշմամբ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 01/03

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը կարգավորում է Համահայկական բանկի թղթակցային հաշիվների բացումը, Համահայկական բանկի համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և սահմանաչափերը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

2. Համահայկական բանկը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) բացում է Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվներ:

3. Համահայկական բանկը կարող է Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում գործող բանկերում: Համահայկական բանկը չի բացում անկանխիկ ոսկով թղթակցային հաշիվներ Հայաստանի Հանրապե-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մարտի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.04.2012 թ. (ՀՀԳՏ N11(424), 16.04.2012):

տության տարածքում և արտերկրում գործող բանկերում: Թղթակցային հաշվի բացման մասին Համահայկական բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

4. Սույն կանոնակարգի և սույն կանոնակարգի հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած այլ իրավական ակտերի իմաստով՝ «նոստրո» հաշիվը թղթակից բանկում Համահայկական բանկի անունով բացված Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով հաշիվն է:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ

5. Համահայկական բանկի համար սահմանվող բանկային գործունեության տնտեսական նորմատիվներն են.

1) կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը,
2) ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը՝ ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը,
3) Համահայկական բանկի բարձր իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը,
4) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը,
5) խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը,
6) Համահայկական բանկի հետ փոխկապակցված մեկ անձի գծով ռիսկի (այդ թվում՝ բաժնետոմսերի (բաժնեմասերի կամ փայերի գծով)) առավելագույն չափը,
7) Համահայկական բանկի հետ փոխկապակցված բոլոր անձանց գծով ռիսկի (այդ թվում՝ բաժնետոմսերի (բաժնեմասերի կամ փայերի գծով)) առավելագույն չափը,
8) արտարժույթի տնօրինման նորմատիվը:

6. Եթե Համահայկական բանկն ունի դուստր ընկերություն, ապա Կենտրոնական բանկի կողմից սահմանվող բանկային գործունեության տնտեսական նորմատիվները կիրառվում են նաև Համահայկական բանկի համախմբված հաշվետվությունների նկատմամբ՝ հիմք ընդունելով բանկերի համախմբված հաշվետվությունների կազմումը և ներկայացումը կարգավորող Կենտրոնական բանկի համապատասխան իրավական ակտը:

7. Համահայկական բանկի կանոնադրական կապիտալի համալրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի ««Համահայկական բանկի լիցենզավորումը, Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը և ներկայացվող փաստաթղթերը, Համահայկական բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների, նախագահի ու տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 01/02-ը հաստատելու մասին» թիվ 263-Ն որոշմամբ սահմանված կարգով:

8. Համահայկական բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը հիսուն միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ է: Համահայկական բանկի կանոնադրական կապիտալը կարող է համալրվել բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով:

9. Համահայկական բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է հինգ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամ:

10. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) սահմանվում է 12 տոկոս:

11. Համահայկական բանկի բարձր իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն2 նորմատիվ) սահմանվում է 100 տոկոս:

12. Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը ($Ն3^1$ նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 25 տոկոսը:

13. Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը ($Ն3^2$ նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 500 տոկոսը:

14. Համահայկական բանկի հետ փոխկապակցված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը ($Ն4^1$) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը:

15. Համահայկական բանկի հետ փոխկապակցված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը ($Ն4^2$) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 30 տոկոսը:

16. Արտարժույթի տնօրինման նորմատիվը բաղկացած է երկու տարրերից՝ արտարժութային դիրք և ըստ առանձին արտարժույթների դիրք: Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 10 տոկոս: Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 7 տոկոս:

ԳԼՈՒԽ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

17. Համահայկական բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկման կարգը, այդ թվում՝ պարբերականությունը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը, սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը և բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 2) սահմանված կարգով: Ընդ որում, Համահայկական բանկի չբաշխված շահույթը Համահայկական բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է առանց որևէ սահմանափակման:

18. Համահայկական բանկի ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցության նորմատիվի հաշվարկման կարգը, պարբերականությունը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը սահմանվում են Կանոնակարգ 2-ով: Ընդ որում, սույն կետում նշված նորմատիվի հաշվարկում ընդգրկվող գործառնական ռիսկը հաշվարկվում է միայն գործառնական ռիսկի հաշվարկման հիմնական բնութագրիչների մոտեցման համաձայն:

19. Սույն կանոնակարգում Համահայկական բանկի բարձր իրացվելի ակտիվների սահմանումը և բարձր իրացվելի ակտիվներում ընդգրկվող տարրերը համապատասխանում են Կանոնակարգ 2-ի բարձր իրացվելի ակտիվների սահմանմանը և բարձր իրացվելի ակտիվներում ընդգրկվող տարրերին:

20. Համահայկական բանկի բարձր իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև հարաբերակցությունը հաշվարկվում է՝

$$Ն2 = \frac{Աբի}{Պպ}$$

բանաձևով, որտեղ՝

$$Աբի = \frac{(Աբի_1+Աբի_2+...+Աբի_ն)}{Ն},$$

որտեղ՝ $Աբի_1$, $Աբի_2$, ..., $Աբի_ն$ - Համահայկական բանկի բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

Պպ - միջին օրական հաշվարկով Համահայկական բանկի պարտավորություններն են, որը որոշվում է՝

$$Պպ = \frac{(Պպ_{11}*Ռ1+Պպ_{12}*Ռ2+Պպ_{13}*Ռ3+ Պպ_{14}*Ռ4+ Պպ_{15}*Ռ5+ Պպ_{16}*Ռ6+ Պպ_{17}*Ռ7+ +...+Պպ_{ն1}*Ռ1+ +Պպ_{ն2}*Ռ2+Պպ_{ն3}*Ռ3+ Պպ_{ն4}*Ռ4+ Պպ_{ն5}*Ռ5 + Պպ_{ն6}*Ռ6+ Պպ_{ն7}*Ռ7)}{Ն}$$

բանաձևով, որտեղ՝

$Պպ_{11}$, $Պպ_{21}$, ..., $Պպ_{ն1}$ - Համահայկական բանկի՝ սույն կանոնակարգի 21-րդ կետում նշված այն պարտավորություններն են ըստ օրերի, որոնք ենթակա են մարման տվյալ օրվան հաջորդող 30 օրացուցային օրերի ընթացքում, այդ թվում՝ սույն կանոնակարգի 21-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող և ժամկետանց պարտավորությունները, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

$Պպ_{12}$, $Պպ_{22}$, ..., $Պպ_{ն2}$ - Համահայկական բանկի՝ սույն կանոնակարգի 21-րդ կետում նշված այն պարտավորություններն են ըստ օրերի, որոնք ենթակա են մարման տվյալ օրվան հաջորդող 31-60 (ներառյալ) օրացուցային օրերի ընթացքում, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

$Պպ_{13}$, $Պպ_{23}$, ..., $Պպ_{ն3}$ - Համահայկական բանկի՝ սույն կանոնակարգի 21-րդ կետում նշված այն պարտավորություններն են ըստ օրերի, որոնք ենթակա են մարման տվյալ օրվան հաջորդող 61-120 (ներառյալ) օրացուցային օրերի ընթացքում, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

$Պպ_{14}$, $Պպ_{24}$, ..., $Պպ_{ն4}$ - Համահայկական բանկի՝ սույն կանոնակարգի 21-րդ կետում նշված այն պարտավորություններն են ըստ օրերի, որոնք ենթակա են մարման տվյալ օրվան հաջորդող 121-210 (ներառյալ) օրացուցային օրերի ընթացքում, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

$Պպ_{15}$, $Պպ_{25}$, ..., $Պպ_{ն5}$ - Համահայկական բանկի՝ սույն կանոնակարգի 21-րդ կետում նշված այն պարտավորություններն են ըստ օրերի, որոնք ենթակա են մարման տվյալ օրվան հաջորդող 211-360 (ներառյալ) օրացուցային օրերի ընթացքում, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

$Պպ_{16}$, $Պպ_{26}$, ..., $Պպ_{ն6}$ - Համահայկական բանկի՝ սույն կանոնակարգի 21-րդ կետում նշված այն պարտավորություններն են ըստ օրերի, որոնք ենթակա են մարման տվյալ օրվան հաջորդող 361-720 օրացուցային օրերի ընթացքում, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

$Պպ_{17}$, $Պպ_{27}$, ..., $Պպ_{ն7}$ - համահայկական բանկի՝ սույն կանոնակարգի 21-րդ կետում նշված այն պարտավորություններն են ըստ օրերի, որոնք ենթակա են մարման տվյալ օրվան հաջորդող 721 և ավելի օրացուցային օրերի ընթացքում, իսկ «ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,
Ռ1, Ռ2, Ռ3, Ռ4, Ռ5, Ռ6 և Ռ7 - համապատասխան պարտավորությունների կշիռներն են, ընդ որում՝ Ռ1-ը սահմանվում է 100%, Ռ2-ը՝ 80%, Ռ3-ը՝ 60%, Ռ4-ը՝ 40%, Ռ5-ը՝ 20%, Ռ6-ը՝ 10%, իսկ Ռ7-ը՝ 5%:

21. Ն2 նորմատիվի իմաստով պարտավորություններ են համարվում.

1) Համահայկական բանկի հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված ցպահանջ և մարման սահմանված ժամկետ չունեցող տոկոսները): Ընդ որում, ցպահանջ պարտավորություններից նվազեցվում են Կանոնակարգ 2-ի 34.8-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները),
2) ժամկետանց պարտավորությունները: Սույն կանոնակարգի իմաստով՝ ժամկետանց են համարվում այն պարտավորությունները, որոնք, բացառությամբ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում: Դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները համարվում են ցպահանջ,
3) Համահայկական բանկի հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող բոլոր պարտավորությունները,
4) Համահայկական բանկի կողմից կնքված ածանցյալ գործարքների գծով զուտ վճարումների մեծությունը: Սույն կանոնակարգի իմաստով ածանցյալ գործարքների գծով զուտ վճարումները Համահայկական բանկի կողմից կնքված ածանցյալ գործարքների գծով վճարման ենթակա և ստացման ենթակա գումարների դրական տարբերությունն է,
5) Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները, ինչպես նաև պայմանագրով սահմանված ցանկացած այլ պարտավորություններ:

22. Ն2 նորմատիվը հաշվարկվում է ամսական կտրվածքով:

23. Համահայկական բանկի մեկ փոխառուի և խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվների հաշվարկման կարգը, պարբերականությունը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը սահմանվում են Կանոնակարգ 2-ով: Ընդ որում, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկում խոշոր փոխառու է համարվում այն անձը, որի գծով ռիսկը (համաձայն Կանոնակարգ 2-ով սահմանված $Ն3^1$ նորմատիվի ռիսկ տարրի հաշվարկման մեթոդաբանության) գերազանցում է Համահայկական բանկի ընդհանուր կապիտալի 10 տոկոսը:

24. $Ն4^1$ և $Ն4^2$ նորմատիվների հաշվարկին մասնակցող տարրերի կազմը, նորմատիվների հաշվարկման կարգը, այդ թվում՝ պարբերականությունը, իրականացվում են Կանոնակարգ 2-ով՝ բանկի հետ կապված մեկ անձի և բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվների հաշվարկին մասնակցող տարրերի կազմին, նորմատիվների հաշվարկման կարգին, այդ թվում՝ պարբերականությանը համապատասխան: $Ն4^1$ և $Ն4^2$ նորմատիվները հաշվարկվում են միայն՝

1) այն անձանց նկատմամբ, որոնք Համահայկական բանկի հետ փոխկապակցված են միայն այն հիմքով, որ Համահայկական բանկը ձեռք է բերել այդ անձանց ձայնի իրավունք տվող բաժնեմասերի կամ փայերի 20 և ավելի տոկոսը կամ 20 տոկոսից փոքր բաժնեմասեր կամ փայեր, սակայն իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել այդ անձանց որոշումները, և նման ներդրումն իրականացվել է ձեռնարկատիրական կապիտալի ֆինանսավորմանը վերաբերող Համահայկական բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի համաձայն, և
2) Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված այն անձանց նկատմամբ, որոնք Համահայկական բանկի հետ փոխկապակցված են սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված միջազգային ֆինանսական կազմակերպութան հետ ունեցած հարաբերությունների հիմքով:

25. $Ն4^1$ և $Ն4^2$ նորմատիվները չեն հաշվարկվում՝

1) Հայաստանի Հանրապետության, Կենտրոնական բանկի, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք Համահայկական բանկի հետ փոխկապակցված են միայն այն հիմքով, որ Հայաստանի Հանրապետությունը կամ Կենտրոնական բանկը տիրապետում է Համահայկական բանկի և այդ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 տոկոսից ավելիին կամ իրավունք ունի օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշել նրանց որոշումները,

2) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն բանկերի նկատմամբ, որոնք Համահայկական բանկի հետ փոխկապակցված են միայն այն հիմքով, որ սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված միջազգային ֆինանսական կազմակերպությունը տիրապետում է Համահայկական բանկի և այդ բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 տոկոսից ավելիին կամ իրավունք ունի օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշել նրանց որոշումները:

26. Համահայկական բանկին արգելվում է կրել ռիսկ Համահայկական բանկի հետ կապված անձանց գծով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 24-րդ և 25-րդ կետերով սահմանված անձանց: Սույն կետում և սույն կանոնակարգի 27-րդ կետում նշված «ռիսկ» տերմինն ունի Կանոնակարգ 2-ի 42-րդ կետով սահմանված նշանակությունը:

27. Համահայկական բանկին արգելվում է կրել ռիսկ Համահայկական բանկի աշխատակիցների գծով: Ընդ որում, Համահայկական բանկի աշխատակիցների գծով ռիսկը չի ներառում առհաշիվ տրված գումարները, որոնց մեծությունը բոլոր աշխատակիցների գծով յուրաքանչյուր օրվա դրությամբ չի կարող գերազանցել 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

28. Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկման կարգը, այդ թվում՝ պարբերականությունը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը սահմանվում են Կանոնակարգ 2-ով:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

29. Սույն կանոնակարգով սահմանված պահանջների չկատարման դեպքում Համահայկական բանկը, ինչպես նաև Համահայկական բանկի ղեկավարները, կրում են պատասխանատվություն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

Հավելված 1
«Համահայկական բանկի գործունեության
կարգավորումը և տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 01/03-ի

1. Ասիական զարգացման բանկ
2. Եվրոպական ինվեստիցիոն բանկ
3. KfW (ԿաէֆՎե) բանկ և Deutsche Investitions-und Entwicklungsgesellschaft (DEG) (Դոյչե Ինվեստիցիոնս ունդ Ենթվիքլունգսգեզելշաֆթ)
4. Համաշխարհային բանկի խումբ
   1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
   2) Միջազգային զարգացման ընկերակցություն
   3) Միջազգային ֆինանսական կորպորացիա
5. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ
6. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

*«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 17/09-ը հաստատելու մասին**

Հաշվի առնելով դրամական փոխանցում իրականացնելու լիցենզիա ունեցող վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերահսկողության իրականացման խնդիրը, որի հետ կապված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) պետք է ունենա բավարար տեղեկատվություն՝ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունների և մատուցվող ծառայությունների ընթացակարգերի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների կանխիկ դրամական միջոցների ինկասացման գործընթացին ներկայացվող պահանջների իրականացման անհրաժեշտությունը,

Նպատակ ունենալով սահմանել վճարահաշվարկային կազմակերպության կողմից կանխիկ դրամի ինկասացման ընթացակարգերի և կանխիկ դրամական միջոցների հետ կապված պահանջները,

հիմք ընդունելով «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 17/09-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 մարտի 2012 թ., N 66-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 17/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպություններում կանխիկ դրամով գործառնությունների իրականացման կարգը, կանխիկ դրամի ընդունման ժամանակ կեղծ կամ անվճարունակ դրամանիշերի հայտնաբերման դեպքե-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մարտի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.04.2012 թ. (ՀՀԳՏ N11(424), 16.04.2012):

րում ձեռնարկվող գործողությունները, կանխիկ դրամի հնկասացիան: Ընդ որում, սույն կանոնակարգով չկարգավորված մասով վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թ. ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգի իմաստով՝

1) ***Գործառնական դրամարկղ*** (այսուհետ՝ դրամարկղ), որտեղ իրականացվում է հաճախորդների դրամարկղային սպասարկումը,
2) ***Դրամարկղի վճարային փաստաթղթեր***՝ կանխիկ դրամի մուտքի և ելքի օրդերներ և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր,
3) ***Գանձապահ***՝ վճարահաշվարկային կազմակերպության աշխատակից, ով իրականացնում է կանխիկ դրամի մուտքագրումը վճարահաշվարկային կազմակերպության դրամարկղ և ելքագրումը վճարահաշվարկային կազմակերպության դրամարկղից,
4) ***Հաշվեսխալ***՝ վճարահաշվարկային կազմակերպություններում, ինչպես նաև դեպի սպասարկող բանկ փոխադրման դեպքում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված ավելցուկ, պակասորդ, անվճարունակ կամ կեղծ թղթադրամների և մետաղադրամների առկայություն,
5) ***Սպասարկող բանկ***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ, որն իրականացնում է վճարահաշվարկային կազմակերպության սպասարկումը,
6) ***Վճարահաշվարկային կազմակերպության հաճախորդ***՝ վճարահաշվարկային կազմակերպության ծառայություններից օգտվող անձինք,
7) ***Ավտոմատ ինքնասպասարկման սարքավորում/տերմինալ***՝ գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված ինքնասպասարկման էլեկտրոնային ծրագրատեխնիկական այն սարքը, որն ապահովում է ֆինանսական գործառնությունների իրականացումն առանց ֆինանսական կազմակերպության աշխատակցի միջամտության (վճարումների ընդունման տերմինալ),
8) ***Տերմինալի հնկասացման անդորրագիր***՝ ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից կանխիկ դրամի տեղափոխման ժամանակ որպես առաքվող կանխիկ դրամին ուղեկցող ցուցակ՝ տերմինալից տպվող անդորրագիր,
9) ***Հնկասացիոն կազմակերպություն***՝ «Հնկասացիայի մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հնկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
10) ***Կանխիկ դրամ***՝ շրջանառության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության կանխիկ դրամ և կանխիկ արտարժույթ,
11) ***Վճարահաշվարկային կազմակերպություն*** սույն կարգի իմաստով՝ դրամական փոխանցում իրականացնելու լիցենզիա ունեցող վճարահաշվարկային կազմակերպություն,
12) ***Վճարահաշվարկային կազմակերպություններում դրամարկղային գործառնություն*** հնկասատորից կամ պատասխանատու անձից կանխիկ դրամի ընդունումը/հանձնումը, հաճախորդների սպասարկումից դրամարկղում կանխիկ դրամի մուտքը/ելքը, վճարահաշվարկային կազմակերպություններում կանխիկ դրամի փոխադրումների փաստաթղթային ձևակերպումները, առհաշիվ կանխիկ դրամի տրամադրումը/վերադարձը գանձապահին, վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց, այդ թվում՝ կազմակերպության գտնվելու վայրից դուրս կանխիկ դրամի վճարման համար, ինչպես նաև այդ գումարների նկատմամբ սահմանափակումները, դրամարկղի ամփոփումը, դրամարկղում առկա միջոցների պահպանումը,
13) ***Դրամապահոց կամ չհրկիզվող պահարանների սենյակ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու մասին թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվար-

կային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ով սահմանված պահանջները բավարարող դրամապահոց կամ չհրկիզվող պահարանների սենյակ,

14) ***կանխիկ դրամի ընդունման, տեղափոխման, հանձնման գործընթաց*** (այսուհետ՝ Ինկասացում)՝ սույն կանոնակարգի համաձայն՝ ինկասացումն իրականացվում է ինկասացիոն կազմակերպության, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց միջոցով:

ԳԼՈՒԽ 3. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3. Վճարահաշվարկային կազմակերպությունները մշակում և առաջնորդվում են ներքին կանոնակարգող կարգերով, որոնք հաստատվում են կազմակերպության կողմից և չպետք է հակասեն սույն կանոնակարգին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերին: Ընդ որում, կազմակերպության կարգերով առնվազն սահմանվում է.

1) ինկասացման կազմակերպման հետ կապված գործընթացը,
2) կանխիկ դրամի վերահաշվարկի գործընթացը,
3) կեղծ կամ անվճարունակ դրամանիշերի հայտնաբերման հետ կապված գործընթացը,
4) կազմակերպության գտնվելու վայրից դուրս կանխիկ դրամի վճարման գործընթացը,
5) դրամարկղում առկա կանխիկ դրամի պահպանման գործընթացը,
6) կանխիկ դրամի ընդունման և հանձնման գործընթացը,
7) հաշվեսխալների հայտնաբերման դեպքում իրականացվող գործընթացը,
8) կանխիկ դրամի մուտքագրման ժամանակ դրամանիշերի վճարունակության ստուգման, ինչպես նաև փորձաքննության ներկայացման գործընթացը:

4. Վճարահաշվարկային կազմակերպություններում ինկասացված կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների դեպքերը կարգավորվում են նաև կնքվող երկկողմանի պայմանագրերով, որոնք չպետք է հակասեն սույն կանոնակարգին և Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերին:

5. Դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման ժամանակ կեղծ դրամանիշերի հայտնաբերման դեպքում պարտադիր կարգով կազմվում է ակտ առնվազն 4 օրինակից (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի), որը ստորագրվում է կեղծ դրամանիշը հայտնաբերող գանձապահի և վճարահաշվարկային կազմակերպության (գլխամասային գրասենյակ/մասնաճյուղ) ղեկավարի կողմից: Իսկ հաճախորդի (կամ ինկասատորի) ներկայության դեպքում ակտը ստորագրվում է նաև վերջինիս կողմից: Ակտի մեկ օրինակը կեղծ դրամանիշերի հետ միասին հանձնվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: Ակտի երկրորդ օրինակն ուղարկվում է Կենտրոնական բանկ: Ակտի երրորդ օրինակը հանձնվում է կանխիկ դրամը հանձնող հաճախորդին (կամ կանխիկ դրամն առաքող բանկին), իսկ չորրորդ օրինակը մնում է կեղծ դրամանիշերը հայտնաբերող վճարահաշվարկային կազմակերպությունում: Վճարահաշվարկային կազմակերպության կողմից ակտերը համարակալվում են, որոնց տրվում է հերթական (եզակի) համար:

ԳԼՈՒԽ 4. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԻՆԿԱՍԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ

6. Վճարահաշվարկային կազմակերպությունը կանխիկ դրամի ինկասացումը կատարում է վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակից և/կամ մասնաճյուղից, ինքնասպասարկման տերմինալներից դեպի սպասարկող բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղ և/կամ իր գլխամասային գրասենյակ և հակառակ ուղղությամբ:

7. Վճարահաշվարկային կազմակերպությունը կարող է իրականացնել իր գլխամասային գրասենյակի և/կամ մասնաճյուղերի դրամարկղում առկա կանխիկ դրամի հնկասացում և պահպանում՝

1) սպասարկող բանկի գլխամասային գրասենյակի և/կամ մասնաճյուղի դրամապահոցում՝ համապատասխան պայմանագրի առկայության դեպքում, կամ
2) իր գլխամասային գրասենյակում և/կամ իր մասնաճյուղերում, որտեղ առկա է դրամապահոց կամ չհրկիզվող պահարանների սենյակ:

8. Եթե վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակում և/կամ մասնաճյուղում առկա է դրամապահոց կամ չհրկիզվող պահարանների սենյակ, ապա յուրաքանչյուր օրվա վերջում իրականացվում է դրամարկղում առկա ամբողջ կանխիկ դրամի տեղափոխում գլխամասային գրասենյակի և/կամ մասնաճյուղի դրամապահոց կամ չհրկիզվող պահարանների սենյակ, այնտեղ համապատասխան ձևով պահպանման համար: Վճարահաշվարկային կազմակերպության դրամապահոցում կամ չհրկիզվող պահարանների սենյակում պահպանվող առավելագույն գումարի համար սահմանափակում չի սահմանվում:

9. Վճարահաշվարկային կազմակերպությունն ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից կանխիկ դրամական միջոցները կարող է տեղափոխել.

1) իր գլխամասային գրասենյակ (մասնաճյուղ) և մուտքագրել դրամարկղ,
2) սպասարկող առևտրային բանկ և տրամադրել պահատվության,
3) սպասարկող առևտրային բանկ (բանկի մասնաճյուղ) և մուտքագրել իր բանկային հաշվի վրա:

10. Վճարահաշվարկային կազմակերպությունը ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից կանխիկ դրամի հնկասացում կարող է չիրականացնել, եթե ինքնասպասարկման տերմինալում առկա կանխիկ դրամի ընդհանուր մնացորդը (Հայաստանի Հանրապետության կանխիկ դրամը և համարժեք արտարժույթը միասին) օրվա վերջում չի գերազանցում 3 մլն ՀՀ դրամը:

11. Վճարահաշվարկային կազմակերպությունը գլխամասային գրասենյակում (մասնաճյուղում) դրամապահոցի (չհրկիզվող պահարանների սենյակի) բացակայության պարագայում կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի հնկասացում, հետևյալ դեպքերում.

1) դրամարկղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին և/կամ պատին, և
2) դրամարկղում և չհրկիզվող պահարանում առկա կանխիկ դրամի ընդհանուր մնացորդը (Հայաստանի Հանրապետության կանխիկ դրամը և համարժեք արտարժույթը միասին) օրվա վերջում չի գերազանցում 3 մլն ՀՀ դրամը (գյուղապետարաններում գործող մասնաճյուղերի համար 2 մլն ՀՀ դրամը):

12. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից հնկասացման գործընթացն իրականացվում է հետևյալ սկզբունքով.

1) մեկ և/կամ մի քանի կետերից ընդունված և միաժամանակ տեղափոխվող՝ մինչև 3 մլն ՀՀ դրամը ներառյալ ընդհանուր գումարով կանխիկ դրամի հնկասացումը կարող է կատարվել.
   ա. վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց կողմից, առանց հնկասացիոն կազմակերպության ծառայություններից օգտվելու, կամ
   բ. վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձի (անձանց) կողմից, սակայն հնկասացիոն ծառայության աշխատակիցների ուղեկցությամբ, կամ
   գ. միայն հնկասացիոն ծառայությունների միջոցով, որի վրա չի տարածվում 1-ին ենթակետի սահմանափակում:
2) 3 մլն ՀՀ դրամից ավելի ընդհանուր գումարով կանխիկ դրամի հնկասացումը կատարվում է միայն հնկասացիոն ծառայությունների կողմից:

13. Վճարահաշվարկային կազմակերպությունը մշակում և առաջնորդվում է կանխիկ դրամի հնկասացման գործընթացը նկարագրող ներքին կարգերով, որոնք հաստատվում են կազմակերպության կողմից: Ընդ որում, այդ կարգերում կարող են չնշվել հնկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագրային դրույթները, սակայն հնկասացման գործընթացից կախված՝ առնվազն ներառում են.

1) հնկասացիոն կազմակերպության միջոցով իրականացվող հնկասացման գործընթացը,
2) վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձի (անձանց) ուղեկցման գործընթացի իրականացումն հնկասացիոն կազմակերպության աշխատակիցների կողմից,
3) վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց միջոցով կանխիկ դրամի հնկասացման գործընթացի նկարագրումը,
4) հնկասացիոն կազմակերպությանը պահատվության տրամադրումը:

14. Վճարահաշվարկային կազմակերպության և հնկասացիոն կազմակերպության միջև բոլոր հարաբերությունները կարգավորվում են վերջիններիս միջև կնքված պայմանագրային հիմունքներով և սույն կա-

նոնակարգով: Կնքված պայմանագրի պատճենը ներկայացվում է Կենտրոնական բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի:

15. Վճարահաշվարկային կազմակերպությունն ինկասացման գործընթացի հետ կապված կնքվող պայմանագրերում, ինչպես նաև սույն կանոնակարգի 13-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նշված պահանջներից յուրաքանչյուրի համար՝ ինկասացման գործընթացից կախված սահմանում է.

1) ինկասացման հետ կապված գործառնությունների նկարագրությունը, դրանցում ընդգրկված պատասխանատու անձանց իրավասությունները,
2) ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումներից կանխիկ դրամի ընդունման/հանձնման ձևը,
3) վճարահաշվարկային կազմակերպությունում (գլխամասային գրասենյակում/մասնաճյուղում) կանխիկ դրամի ընդունման և հանձնման ձևերը,
4) կանխիկ դրամի փոխադրման ձևերը և ժամկետները,
5) ինկասացիոն կազմակերպության աշխատակցի կողմից վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց ուղեկցման կարգը՝ կանխիկ դրամի փոխադրման ժամանակ,
6) կանխիկ դրամի փոխադրում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց պատասխանատվությունը և պարտականությունները,
7) պատասխանատու անձանց միջոցով կանխիկ դրամի փոխադրման ժամանակ վերջիններիս պատասխանատվությունը և պարտականությունները,
8) ինկասացիոն կազմակերպության միջոցով կանխիկ դրամի փոխադրման ժամանակ կողմերի պատասխանատվությունը և պարտականությունները,
9) ինկասացիայի իրականացման գործընթացի սկիզբը և ավարտը,
10) կանխիկ դրամի փոխադրման համար կարգագրերի ձևը և ներկայացումը,
11) «Առաքվող արժեքների ցուցակի» ձևը՝ արտարժույթի տեղափոխման դեպքում,
12) «Տերմինալի ինկասացման անդորրագրի» ձևը և դրանում պարունակվող տեղեկատվությունը,
13) կանխիկ դրամի փոխադրման գործընթացի հետ կապված կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևերը, որոնք սահմանված չեն Կենտրոնական բանկի իրավական ակտերով:

16. Վճարահաշվարկային կազմակերպության և ինկասացիոն կազմակերպության միջև կնքված պայմանագրով առնվազն սահմանվում են ինկասացիոն կազմակերպության հետ կապված՝ սույն կանոնակարգի 15-րդ կետով նշված պահանջները, ինչպես նաև ներառվում են.

1) կանխիկ դրամի ապահովագրման պահանջը,
2) կանխիկ դրամի պահատվության տրամադրումը,
3) ինկասացիոն կազմակերպության կողմից ինկասատորներին տրված լիազորագրի ձևը (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի) և ներկայացման քարտի ձևը (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի),
4) կանխիկ դրամի հանձնման ժամանակ ստորագրվող ստացագրի ձևը (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի):

17. Կնքված պայմանագրերը չպետք է հակասեն «Ինկասացիայի մասին» օրենքի, սույն կանոնակարգի և Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին:

18. Փոխադրված կանխիկ դրամի հանձնման ժամանակ, փոխադրող և ընդունող կողմերի միջև ստորագրվում է համապատասխան ստացագիր (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի):

19. Վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակի և/կամ մասնաճյուղերի միջև ինկասացիոն կազմակերպությունների միջոցով առաքվող կանխիկ դրամը ստացող կողմը (գլխամասային գրասենյակը/մասնաճյուղը) ընդունում է նույն ձևով, ինչ ձևով առաքողը հանձնել է ինկասացիոն կազմակերպությանը:

20. Վճարահաշվարկային կազմակերպությունն ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից կանխիկ դրամի ինկասացման գործընթացի հետ կապված՝ սույն կանոնակարգի 15-րդ կետով նշված պահանջների հետ միասին առնվազն սահմանում և ապահովում է.

1) ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից կանխիկ դրամի հանձնումն ինկասացիոն ծառայություններին իրականացվում է վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձի (անձանց) միջոցով,
2) ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից կանխիկ դրամի տեղափոխման ժամանակ վճարահաշվարկային կազմակերպության կողմից տերմինալից ավտոմատ կերպով տպվում և տեղափոխվող միջոցներին կցվում է «Տերմինալի ինկասացման անդորրագիրը»,
3) վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակում (մասնաճյուղում) ավտոմատ ինքնասպասարկման տերմինալներից տեղափոխված դրամական միջոցները հաշվարկվում են և համեմատվում «Տերմինալի ինկասացման անդորրագրի» տվյալների հետ,

4) ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից տեղափոխված և վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակի (մասնաճյուղի) դրամարկղ մուտքագրված կանխիկ դրամի դիմաց տրվում է «կանխիկ դրամի մուտքի օրդեր»,
5) ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից ինկասացված կանխիկ դրամի վճարունակությունը ստուգելիս, ինչպես նաև կեղծ դրամանիշերի և հաշվեսխալների հայտնաբերման ժամանակ վճարահաշվարկային կազմակերպությունն առաջնորդվում է սույն կանոնակարգի պահանջներով,
6) ավտոմատ ինքնասպասարկման տերմինալից կանխիկ դրամի տեղափոխման համար վճարահաշվարկային կազմակերպության կողմից կազմվող կարգագրում կարող է նշվել միայն տեղափոխման ենթակա «ընդհանուր գումարը»՝ չտարանջատելով ըստ թղթադրամների և մետաղադրամների: Կարգագրում նշված «ընդհանուր գումարը» կարող է ճշգրտվել՝ «Տերմինալի ինկասացման անդորրագրի» տվյալներով, գումարի ինկասացումից հետո:

21. «Տերմինալի ինկասացման անդորրագիրը» առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

1) ըստ անվանական արժեքի՝ թղթադրամների և մետաղադրամների քանակը,
2) ինկասացվող ընդհանուր գումարը,
3) «Տերմինալի ինկասացման անդորրագրի» հերթական (եզակի) համարը,
4) տերմինալի նույնականացման ունիկալ (Այ-Դի) կոդը,
5) ինկասացման ամսաթիվը, ժամը,
6) ավտոմատ ինքնասպասարկման տերմինալի հասցեն,
7) վճարահաշվարկային կազմակերպության անվանումը,
8) այլ տեղեկատվություն՝ ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

22.Վճարահաշվարկային կազմակերպությունը կանխիկ դրամի ինկասացման գործընթացը նկարագրող ներքին իրավական ակտերը, այդ թվում՝ դրանցում կատարված փոփոխություններն ու լրացումները ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի:

23. Վճարահաշվարկային կազմակերպությունների համար սույն կանոնակարգով սահմանված՝ կանխիկ դրամի պահպանման և ինկասացման հետ կապված սահմանաչափերն ամփոփ տեսքով բերված են Հավելված 8-ում, որը կրում է ուղեցուցային բնույթ:

ԳԼՈՒԽ 5. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

24. Վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց միջոցով կանխիկ դրամի ստացումը, տեղափոխումը և հանձնումը կարող է իրականացվել առանց ինկասացիոն կազմակերպության ծառայություններից օգտվելու: Ընդ որում.

1) վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց միջոցով կանխիկ դրամի ինկասացումը կատարվում է առնվազն երկու անձի միջոցով՝ սույն կանոնակարգի 12-րդ կետի համապատասխան ենթակետերի համաձայն,
2) վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց միջոցով կանխիկ դրամի ինկասացման գործառնությունը կարգավորող ներքին կարգերում նկարագրվում են սույն կանոնակարգի 13-րդ կետի 3-րդ ենթակետով նշված պահանջները,
3) վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց կողմից բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակից (մասնաճյուղից), ինքնասպասարկման տերմինալներից կանխիկ դրամը ստանալուց հետո դրանք անմիջապես տեղադրվում են հատուկ պարկի (պայուսակի) մեջ և կնքում: Կանխիկ դրամի տեղափոխումը կատարվում է կնքված պարկերով: Իսկ տեղափոխման ընթացքում կնքված պարկը միշտ գտնվում է վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց տրամադրության տակ:

ԳԼՈՒԽ 6. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԳԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

25. Վճարահաշվարկային կազմակերպություններում կանխիկ դրամի փոխադրումների հետ կապված կարգագրերի ներկայացումը իրականացվում է սույն կանոնակարգի պահանջների համաձայն: Ընդ որում.

1) կանխիկ դրամի փոխադրումները՝ բանկի, վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակի/մասնաճյուղի, ավտոմատ ինքնասպասարկման տերմինալի միջև, իրականացվում են վճարահաշվարկային կազմակերպության կողմից տրված կարգագրերի հիման վրա: Ընդ որում.

ա. ինկասացիոն կազմակերպության ծառայություններից օգտվելու դեպքում՝ կանխիկ դրամի փոխադրումների ժամանակ կարգագրերը ներկայացվում են այդ ինկասացիոն կազմակերպությանը,

բ. միայն վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց միջոցով կանխիկ դրամի փոխադրումների ժամանակ կարգագրերը ներկայացվում են այդ պատասխանատու անձանց,

2) կարգագրերը կարող են ինկասացիոն կազմակերպությանը ներկայացնել ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագրում նշված եղանակով և ընթացակարգով, իսկ կազմակերպության պատասխանատու անձանց՝ համաձայն կազմակերպության ներքին կանոնակարգող կարգերի: Մասնավորապես, կարգագրերը կարող են ներկայացվել.

ա. թղթային եղանակով,

բ. Կենտրոնական բանկի Սի-Բի-էյ-նեթ ցանցի միջոցով,

գ. այլ սահմանված եղանակով,

3) կանխիկ դրամի փոխադրման համար ներկայացվող կարգագրի մեկ օրինակը պետք է առկա լինի և պահպանվի վճարահաշվարկային կազմակերպության փաստաթղթերում,

4) թղթային եղանակով ներկայացվող կարգագրերը ստորագրվում են Վճարահաշվարկային կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց կողմից և կարող են վավերացվել վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակի (մասնաճյուղի) կնիքով (առկայության դեպքում),

5) վճարահաշվարկային կազմակերպությունն իր կարգերով սահմանում է կարգագրերի ներկայացման գործընթացը և առաջնորդվում ամրագրված ընթացակարգով: Ընդ որում՝ հստակ տարանջատում և սահմանում է.

ա. ինկասացիոն ծառայություններից օգտվելու ընթացակարգը,

բ. վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց կարգագրերի ներկայացման ընթացակարգը,

6) կարգագրերի ներկայացման ընթացակարգերը հանդիսանում են կազմակերպության կողմից մշակված կանխիկ դրամի ինկասացման վերաբերյալ ընթացակարգերի մի մաս, որոնք հաստատվում են կազմակերպության կողմից,

7) եթե իրականացվում է դրամական միջոցների փոխադրում բանկից կամ հանձնում բանկին, ապա կարգագիրը ստորագրում է այն պաշտոնատար անձը, որի ստորագրությունների նմուշներն առկա են կանխիկ դրամը տրամադրող բանկում,

8) կարգագրերի ձևը սահմանվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, ինչպես նաև Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով սահմանված վավերապայմանների, որոնք համաձայնեցվում են ինկասացիոն կազմակերպության հետ: Էլեկտրոնային եղանակով կարգագրերի ներկայացման դեպքում օգտագործվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համար տվյալ համակարգում կիրառվող տիպօրինակը, որում նույնպես պետք է պահպանված լինեն առնվազն սույն կանոնակարգով (Հավելված 7) և Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով սահմանված վավերապայմանները,

9) ինկասացիոն կազմակերպության կողմից կանխիկ դրամը վճարահաշվարկային կազմակերպությունից ստանալու համար դրամարկղին ներկայացվում է տվյալ ավագ ինկասատորի անունով ինկասացիոն կազմակերպության կողմից տրված լիազորագիրը (ձևը սահմանվում է երկկողմ պայմանագրով), իսկ եթե կարգագիրը ներկայացվում է թղթային տարբերակով, ապա նաև կարգագրի 1 օրինակը, որոնց հիման վրա ձևակերպվում է կանխիկ դրամի ելքը՝ տվյալ վճարահաշվարկային կազմակերպությունում սահմանված կարգերին համապատասխան,

10) ինկասացիոն կազմակերպությանը կանխիկ դրամը հանձնելու ժամանակ վճարահաշվարկային կազմակերպության կողմից առաքվող կանխիկ դրամին կցվում է երեք օրինակից լրացված արժեքների ցուցակ (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի)՝ ստորագրված դրամարկղի պատասխանատու անձանց կողմից: Արժեքների ցուցակի մեկ օրինակը մնում է առաքող վճարահաշվարկային կազմակերպության մոտ, մեկ օրինակը կանխիկ դրամի հետ դրվում է պարկում, իսկ մյուս օրինակը կանխիկ դրամի հետ հանձնվում է ինկասատորներին,

11) կանխիկ դրամը ստացող վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակում (մասնաճյուղում) ինկասացիոն կազմակերպություններից կանխիկ դրամն ընդունվում է այն ձևով, ինչ ձևով ընդունել է ինկասացիոն կազմակերպությունը,

12) կանխիկ դրամի մուտքն իրականացվում է ստացող վճարահաշվարկային կազմակերպությունում (բանկում) դրամարկղային գործառնությունների իրականացման համար սահմանված կարգերին

համապատասխան: Կանխիկ դրամի ընդունումից հետո դրամարկղի պատասխանատու անձինք և ինկասատորները ստորագրում են արժեքների ցուցակի երկու օրինակների վրա, որոնցից մեկ օրինակը մնում է վճարահաշվարկային կազմակերպությունում (բանկում), իսկ մյուսը, հաստատված ընդունող կողմի կնիքով (առկայության դեպքում), հանձնվում է ինկասացիոն կազմակերպությանը:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

ԱԿՏ
ԿԵՂԾ ԴՐԱՄԱՆԻՇԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«__»_____ 201_ թ. թիվ ___

Սույն ակտը կազմված է _____
(վճարահաշվարկային կազմակերպության անվանումը)

Գանձապահ_____ կողմից
(գանձապահի անունը, ազգանունը, հայրանունը)

Հայտնաբերվել է կեղծ դրամանիշ՝ հանձնված_____ կողմից:
(հաճախորդի անվանումը)

Անվանական արժեքը, սերիան և համարը _____
(անվանական արժեքը թվերով և բառերով)

Գանձապահ _____
(գանձապահի անունը, ազգանունը և ստորագրությունը)

Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավար_____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

Հաճախորդ _____
(հաճախորդի անունը, ազգանունը և ստորագրությունը՝ ներկայության դեպքում)

Կեղծ դրամանիշն ուղարկվել է ՀՀ համապատասխան իրավապահ մարմին_____
(իրավապահ մարմնի անվանումը, որտեղ ուղարկվել է կեղծ դրամանիշը)

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

Առաքվող արժեքների ցուցակ

(Վճարահաշվարկային կազմակերպության գլխամասային գրասենյակից/մասնաճյուղից)

«__»_______ 201_ թ.

Առաքողը ____

Ստացողը ____

Առաքում ենք թղթադրամների, մետաղադրամների կնքված պարկեր ավագ ինկասատոր___________ միջոցով:

Դրամանիշեր	Գումարը (դրամ)
Թղթադրամներ	
10 դ.	
25 դ.	
50 դ.	
100 դ.	
200 դ.	
500 դ.	
1000 դ.	
5000 դ.	
10000 դ.	
20000 դ.	
50000 դ.	
100000 դ.	
Ընդամենը	
Մետաղադրամներ	
10 լ.	
20 լ.	
50 լ.	
1 դ.	
3 դ.	
5 դ.	
10 դ.	
20 դ.	
50 դ.	
100 դ.	
200 դ.	
500 դ.	
Ընդամենը	
Հանրագումարը	

Պարկերի համարները	Կնիքների համարները
1	-
-	-
-	-
-	-
-	-
n	-
Ընդամենը	պարկ

Դրամարկղի պատասխանատու՝
աշխատակիցների ստորագրությունները

Ինկասատորներ՝

Կնիքի տեղը

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

ՍՏԱՑԱԳԻՐ

«__»_____ 201_ թ. ցուցակում նշված արժեքները, որոնք առաքվել են փակ պարկերով՝ ավագ ինկասատոր (պատասխանատու անձ) _____ միջոցով՝ _____ դրամ ընդհանուր գումարով
(գումարը թվերով և բառերով)
ստացանք:

Արժեքների ընդունումը կատարվել է՝ ստուգելով _____
_____
_____

Արժեքներն ընդունեցին՝

Պատասխանատու աշխատակիցներ

Արժեքները հանձնեցին՝

Ինկասատորներ (պատասխանատու անձինք)՝

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

_____
(ինկասացիոն ծառայության անվանումը)
_____
(պաշտոնատար անձի ստորագրությունը)

Կ. Տ.

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՔԱՐՏ

Հաճախորդ _____

Ամիս, ամսաթիվ	Ինկասատորների անունը, ազգանունը	Լիազորագրի համարը	Ուղեկցման ենթակա գումարի չափը	Ուղեկցվող անձի անունը, ազգանունը	Ուղեկցվող անձի ստորագրությունը աշխատանքի կատարման մասին

Հավելված 5
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

_____
(հնկասացիոն կազմակերպության անվանումը)

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ ԹԻՎ _____

Կտրոնի թիվ

Բրիգադի ավագ հնկասատոր _____ -ը

լիազորվում է ստանալու _____

_____ -ից
(արժեքներն ուղարկող բանկի անվանումը)

և հանձնելու_____

_____
(արժեքները ստացող բանկի անվանումը)

_____
(փոխադրվող արժեքների անվանումը)

_____
(գումարը թվերով)

(_____)
(գումարը բառերով)

Լիազորագիրն
ուժի մեջ է մինչև _____ թ._____-ի «__» ներառյալ

գործադիր մարմին (լիազոր անձ)
_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Լիազորագիրը
ստացա_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__»_____ _____ թ.

_____
(հնկասացիոն կազմակերպության անվանումը)

Ուժի մեջ է մինչև ____ թ. _____-ի «__» ներառյալ

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ ԹԻՎ _____

Բրիգադի ավագ հնկասատոր _____ -ը

լիազորվում է ստանալու_____

_____ -ից
(արժեքներն ուղարկող բանկի անվանումը)

և հանձնելու_____

_____
(արժեքները ստացող բանկի անվանումը)

_____
(փոխադրվող արժեքների անվանումը)

_____
(գումարը թվերով)

(_____)
(գումարը բառերով)

ավագ հնկասատոր՝
_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հաստատում եմ՝
գործադիր մարմին (լիազոր անձ)՝_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ.

«__»_____ _____ թ.

ՑՈՒՑԱԿ

Արժեքներն ուղարկելու համար նշանակված բրիգադի կազմում ընդգրկված ինկասատորների

1. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

2. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

3. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

4. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

5. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ՑՈՒՑԱԿ

Արժեքներն ուղարկելու համար նշանակված բրիգադի կազմում ընդգրկված ինկասատորների

1. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

2. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

3. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

4. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

5. _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

Կազմակերպության անվանումը Կանխիկ դրամի առաքման կարգագիր թիվ _____ Հանձնարարվում է տեղափոխել **Թղթադրամ՝ ըստ անվանական արժեքների** 1) Ընդամենը _____ **Մետաղադրամ՝ ըստ անվանական արժեքների** 2) Ընդամենը _____ Հանրագումար (1+2) _____ «__»_____ _____ թ.	Կազմակերպության անվանումը Կանխիկ դրամի առաքման կարգագիր թիվ _____ _____ *(ինկասացիոն ծառայության անվանումը)* Հանձնարարված է փոխադրել _____ _____ _____ դրամ Գործադիր տնօրեն՝ Գլխավոր հաշվապահ՝ «__»_____ _____ թ.	Կազմակերպության անվանումը Կանխիկ դրամի առաքման կարգագիր թիվ _____ Հանձնարարված է փոխադրել _____ դրամ Թղթադրամ_____դ. Մետաղադրամ_____ դ. Հանրագումար_____դ. _____ *(գումարը՝տառերով)* Գործադիր տնօրեն՝ Գլխավոր հաշվապահ՝ «__»_____ _____ թ.

Ենթակա է տեղափոխման Թղթադրամ՝ ըստ անվանական արժեքների 1) Ընդամենը _____ Մետաղադրամ՝ ըստ անվանական արժեքների 2) Ընդամենը _____ Հանրագումար (1+2) _____ _____ «__»_____ 20__ թ.

Հավելված 7
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

_____

(կանխիկ դրամի փոխադրումը հանձնարարող կազմակերպության անվանումը)

Կազմման ամսաթիվ «__» _____ 20__ թ.

Արժեքների փոխադրման ամսաթիվ «__» _____ 20__ թ.

Արժեքների փոխադրման

Կարգագիր թիվ _____

(հերթական համարը, տարվա սկզբից աճողական կարգով)

Տրվում է_____-ը _____-ից դեպի _____

(ինկասացիոն կազմակերպության անվանումը) (արժեքներն առաքողի անվանումը) (արժեքները ստացողի անվանումը)

_____ փոխադրելու համար:

(փոխադրվող արժեքի տեսակը և գումարը՝ թվերով և տառերով)

Այդ թվում՝

_____

(թղթադրամներն ըստ անվանական արժեքների)

_____

(մետաղադրամներն ըստ անվանական արժեքների)

Հավելված 8
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 17/09-ի

	Պահպանվող առավելագույն գումարը օրվա վերջում	**Ինկասացվող առավելագույն գումար**		
		վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձանց կողմից (նվազագույնը երկու հոգի), այդ թվում մի քանի կետերից միաժամանակ ինկասացվող	վճարահաշվարկային կազմակերպության պատասխանատու անձի (անձանց) ուղեկցում ինկասատորի կողմից (այդ թվում՝ մի քանի կետերից միաժամանակ ինկասացվող)	Ինկասացիոն ծառայության կողմից
Դրամապահոցում (չհրկիզվող պահարանների սենյակում) պահպանվող գումար	սահմանափակում չի կիրառվում	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	3 միլիոն դրամից ավելի
Դրամարկղում և չհրկիզվող պահարանում առկա ընդհանուր կանխիկ դրամը	3 միլիոն դրամը չպետք է գերազանցի	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	3 միլիոն դրամից ավելի
	2 միլիոն դրամը չպետք է գերազանցի (գյուղապետարաններում գործող մասնաճյուղերի համար)	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	3 միլիոն դրամից ավելի
Ավտոմատ ինքնասպասարկման տերմինալում առկա կանխիկ դրամը	3 միլիոն դրամը չպետք է գերազանցի	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	3 միլիոն դրամից ավելի

2011 թվականի հունվարի 1-ից հետո արտահաշվեկշռից (ծանուցման հաշիվներից) ակտիվների դուրսգրման և պահուստավորման որոշ հարցերի վերաբերյալ[*]

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 20-ի թիվ 1 պարզաբանմամբ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ
_____ Արթուր Ջավադյան
20 մարտի 2012 թվականի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի _____ թիվ ____
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
_____ Վահե Գաբրիելյան
5 ապրիլի 2012 թվականի

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2011 թվականի նոյեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 327-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի՝ ուժը կորցրած են ճանաչվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 2.5 կետը և 5-րդ գլուխը:

2. Համաձայն Կարգի 2.1 կետի՝ «Վարկեր և դեբիտորական պարտքեր (այսուհետև՝ ակտիվներ) են համարվում բանկի հաշվին (ռիսկով) տեղաբաշխված վարկերը (այդ թվում՝ օվերդրաֆտ, վարկային քարտեր, բանկերում (բացառությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի) ներդրված ավանդներ (այդ թվում՝ նաև բանկային ոսկով)), ֆակտորինգի, ֆինանսական վարձակալության (ֆինանսական լիզինգ), բանկային երաշխիքների և ակրեդիտիվների գծով պահանջները, բանկի ռիսկով ակտիվային այլ գործառնությունների (արժեթղթերում ներդրումներից՝ միայն մուրհակների) գծով ստացվելիք գումարները և (կամ) երրորդ անձանց նկատմամբ այլ պահանջները (ներառյալ՝ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը, բանկերում թղթակցային (բացառությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի) և սառեցված հաշիվները, բանկերի նկատմամբ հաշվարկների գծով կարճաժամկետ պահանջները, հաճախորդներին մատուցված ծառայությունների գծով ստացվելիք գումարները, ստացվելիք այլ գումարները, բանկի աշխատակիցներին տրված առհաշիվ գումարները, մատակարարներին տրված կանխավճարները, նախավճարները, այլ ընթացիկ ակտիվները), ինչպես նաև բանկի համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները»:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2010 թվականի հունիսի 30-ի թիվ 444-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 147-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 5-րդ կետի համաձայն՝ որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից.

4. Որոշման հավելվածի՝

1) 30-րդ կետով Կարգում լրացված 6.4.3 կետի համաձայն՝ ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում ծանուցման հաշիվներից փոխառուի (պարտապանի)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվելու դեպքում,

2) 31-րդ կետով Կարգում լրացված՝

ա) 6.5.1 կետի համաձայն՝ եթե բանկի ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվը (կամ դրա մի մասը) դուրս է գրվել ծանուցման հաշիվներից մինչև Կարգի 6.4.2 կետում նշված հայցային վաղեմության ժամկետի ավարտը կամ Կարգի 6.4.3 կետում նշված փոխառուի (պարտապանի) լուծարվելը՝ ակտիվի (կամ դրա մի մասի) անհատույց զիջման կամ ներման արդյունքում, որով փոխառուի (պարտապանի) նկատմամբ բանկի պահանջի իրավունքը դադարել է, ապա շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է այդ ակտիվի (կամ դրա մի մասի) գումարի չափով,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մարտի 20-ին (ՀՀՊՏ N13 (426), 15.05.2012):

բ) 6.5.2 կետի համաձայն՝ եթե բանկի ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվը (կամ դրա մի մասը) դուրս է գրվել ակտիվի (կամ դրա մի մասի) նկատմամբ բանկի իրավունքի պաշտպանության հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, ապա շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է այդ ակտիվի (կամ դրա մի մասի) գումարի չափով՝ բացառությամբ, եթե ակտիվի (կամ դրա մի մասի) գումարը չի գերազանցում 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

Վերը նշված դրույթների հետ կապված՝ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից հաճախակի են բարձրացվում հարցադրումներ, որոնք վերաբերում են հետևյալին՝

1) Վարկերի և այլ պահանջների գծով հաշվեգրված տոկոսների, տույժերի և տուգանքների նկատմամբ արդյոք իրականացվում է հնարավոր կորուստների համար հատուկ և ընդհանուր պահուստների ձևավորում,

2) Կարգի 6.4.3 կետի դրույթները՝ կապված այն հանգամանքի հետ, թե արդյոք դրանք վերաբերում են նաև այն ակտիվներին, որոնց մասով փոխառուի (պարտապանի)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարման գործընթացը սկսվել է մինչև 2011 թվականի հունվարի 1-ը, սակայն ավարտվել է 2011 թվականի հունվարի 1-ից հետո,

3) Կարգի 6.5.1 և 6.5.2 կետերի դրույթները՝ կապված այն հանգամանքի հետ, թե արդյոք նշված կետերով սահմանվող դեպքերում բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամտի ավելացման պահանջը տարածվում է 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ բանկի ծանուցման հաշիվներում հաշվառվող բոլոր ակտիվների վրա, թե այն ակտիվների վրա, որոնք բանկի ծանուցման հաշիվներ են դուրս գրվել 2011 թվականի հունվարի 1-ից հետո,

4) Կարգի 6.5.2 կետի դրույթները՝ կապված այն հանգամանքի հետ, թե արդյոք նշված կետով սահմանված 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի բացառությունը վերաբերում է բանկի արտահաշվեկշռում (ծանուցման հաշիվներում) հաշվառվող յուրաքանչյուր ակտիվին կամ դրա մի մասին,

5) Կարգի 6.5.1 և 6.5.2 կետերի դրույթները՝ կապված այն հանգամանքի հետ, թե արդյոք շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվի այն գումարի չափով, որով ակտիվը դուրս է գրվել հաշվեկշռից, թե այն գումարի չափով, որը ձևավորվում է արտահաշվեկշռում ակտիվը հաշվառելիս:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պաշտոնապես պարզաբանում են.

1) Կարգի 2.1 կետում հաճախորդներին մատուցված ծառայությունների գծով ստացվելիք գումարների, ինչպես նաև ստացվելիք այլ գումարների ներքո ընդգրկվում են նաև վարկերի և այլ պահանջների գծով հաշվեգրված տոկոսները, տույժերը և տուգանքները: Հետևաբար, հնարավոր կորուստների համար ընդհանուր և հատուկ պահուստների ձևավորում իրականացվում է նաև տոկոսների, տույժերի և տուգանքների գծով:

2) Որոշման հավելվածի 30-րդ կետով Կարգում լրացված 6.4.3 կետի հիմքով 2011 թ. հունվարի 1-ից հետո բանկի (վարկային կազմակերպության) արտահաշվեկշռից (ծանուցման հաշիվներից) դուրսգրման են ենթակա այն բոլոր ակտիվները, որոնց գծով փոխառուները (պարտապանները), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, լուծարված են եղել 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ինչպես նաև այն ակտիվները, որոնց գծով փոխառուները (պարտապանները), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, լուծարվել են 2011 թվականի հունվարի 1-ից հետո՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է սկսվել լուծարման գործընթացը:

3) Որոշման հավելվածի 31-րդ կետով լրացվող դրույթների պահանջները տարածվում են միայն 2011 թվականի հունվարի 1-ից հետո հետհաշվեկշռային (ծանուցման) հաշիվներ դուրս գրված ակտիվների վրա:

4) Որոշման հավելվածի 31-րդ կետով Կարգում լրացված 6.5.2 կետով սահմանված՝ մինչև 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի բացառությունը վերաբերում է բանկի (վարկային կազմակերպության) յուրաքանչյուր ակտիվին կամ դրա մի մասին, որը 2011 թվականի հունվարի 1-ից հետո դուրս է գրվել բանկի (վարկային կազմակերպության) արտահաշվեկշռից (ծանուցման հաշիվներից):

5) Կարգի 6.5.1 և 6.5.2 կետերի համաձայն՝ շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվի այն գումարի չափով, որով ակտիվը (ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները) դուրս է գրվել հաշվեկշռից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 մարտի 2012 թ., N1

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԱՊՐԻԼ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի մայիսի 8-ի նիստի «2012 թվականի մայիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի մայիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 65
Իրական հատվածի ցուցանիշներ 68
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 71
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 76
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 77
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 88
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 106
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 117
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 119
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 125
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (08.05.2012)

2012 թվականի մայիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի մայիսի 8-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը,
խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Օ. Աղասյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ. քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները:

2012 թվականի ապրիլին արձանագրվել է 0.6% գնանկում, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը, նախորդ ամսվա ցուցանիշի համեմատությամբ, նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 1.9%: Ընդ որում, պարենային ապրանքների գների աճի նպաստումը 12-ամսյա ցուցանիշին կազմել է 0.8 տոկոսային կետ, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.7 տոկոսային կետ, ծառայությունների սակագներինը՝ 0.5 տոկոսային կետ: Ամսական գնանկումը պայմանավորված էր հիմնականում բանջարեղենի գների 7.6% անկմամբ, որի նպաստումը կազմել է 0.5 տոկոսային կետ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2012 թվականի հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 6.1%: Արդյունաբերության ճյուղի թողարկման ծավալների աճը կազմել է 16.4%, ծառայությունների ծավալներինը՝ 11.5%: Գյուղատնտեսության ճյուղում, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատությամբ, թողարկման ծավալները չեն փոփոխվել, իսկ շինարարության ճյուղում արձանագրվել է 5.5% անկում:

2012 թվականի հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ընթացիկ հաշվի բարելավման միտումը շարունակվել է՝ հիմնականում պայմանավորված ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների աճով և ապրանքային հաշվեկշռի պակասուրդի նվազմամբ: Արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշները հետևյալն են. 2012 թվականի հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ) ավելացել է 32.4%-ով, իսկ ներմուծումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՍԻՖ)՝ 9.8%-ով:

2012 թվականի տարեսկզբին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա թողել է զսպող ազդեցություն՝ հիմնականում պայմանավորված պետական ծախսերի տնտեսմամբ:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: Հիմնվելով մինչև տարեվերջ գնաճի կանխատեսումների վրա՝ ԿԲ-ն ապրիլին շարունակել է չեզոք դրամավարկային քաղաքականության իրականացումը, և ֆինանսական շուկայում, ընդհանուր առմամբ, տոկոսադրույքներն անփոփոխ են մնացել: Շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը կազմել է 9.92%, միջբանկային ռեպո տոկոսադրույքը՝ 9.45%, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում միջին տոկոսադրույքը՝ 8.93%, բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը՝ 8.64%:

2012 թ. ապրիլին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ ամսվա համեմատ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.74 տոկոսով՝ կազմելով 392.02 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 0.35 տոկոսով՝ կազմել 515.98 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ մնացել է գրեթե անփոփոխ՝ կազմելով 13.29 դրամ:

Ֆինանսական շուկայի զարգացումների պայմաններում դրամավարկային ցուցանիշներն ապրիլի 28-ի դրությամբ արձանագրել են հետևյալ շարժերը. 12-ամսյա կտրվածքով դրամային ավանդների 41.1% աճի պայմաններում դրամային զանգվածն առաջանցիկ՝ 23.7% աճ է արձանագրել փողի զանգվածի 20.7% աճի համեմատությամբ: Արտարժութային ավանդների 12-ամսյա աճը կազմել է 16.9% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 11.2%): Արդյունքում, դոլարայնացման մակարդակն այդ ժամանակահատվածում նվազել է 1.4 կետով (ավելի քան 3%-ով): Վարկավորման աճը շարունակվել է և կազմել 32.9%:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

2012 թ. ապրիլին հիմնական հումքային և արդյունաբերական ապրանքների միջազգային գներն ընդհանուր առմամբ դրսևորեցին գնանկումային միտումներ:

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից հրապարակվող պարենի գների ինդեքսը 2012 ապրիլին նախորդ ամսվա համեմատությամբ նվազել է 1.4%-ով, ինչի արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազումը կազմել է 8.9%: Ցորենի միջազգային գինն ապրիլին նվազել է 6.2%-ով, շաքարավազինը՝ 7%-ով, բրնձինն ավելացել է 6.5%-ով՝ պայմանավորված Ինդոնեզիայում տարվա հիմնական ցանքաշրջանում սպասվածից քիչ գնահատված բերքահավաքով: Բացի այդ, Թաիլանդում, պետական մեխանիզմների կիրառման հետ կապված, բրնձի շուկայում շարունակվում են պահպանվել անորոշությունները:

Արդյունաբերական մետաղներից պղնձի գինը 2012 թվականի ապրիլին նվազել է 2.7%-ով, նավթի գինը՝ 3.5%ով:

Չնայած տարեսկզբին արձանագրված նավթի միջազգային գների աճով պայմանավորված գնաճային դրսևորումներին՝ ԱՄՆ ԴՊՀ-ն, հիմք ընդունելով ԱՄՆ տնտեսության զարգացման չափավոր տեմպերը, դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքն ապրիլին կրկին թողեց անփոփոխ՝ 0-0.25% միջակայքում:

Չնայած 2012 թ. կանխատեսվող թիրախից բարձր գնաճին՝ տնտեսության ցածր ակտիվության պայմաններում Եվրոպական կենտրոնական բանկը մայիսին կրկին անփոփոխ է թողել քաղաքականության տոկոսադրույքը:

Խորհուրդը գնահատեց, որ պարենային և հումքային ապրանքների միջազգային շուկաներից ՀՀ-ում գնաճային միջավայրի վրա ճնշումներ չեն ակնկալվում. չնայած այդ ապրանքների (հիմնականում՝ նավթ, ցորեն) հարաբերական գների տատանումներին՝ ընդհանուր առմամբ, դրանց ազդեցությունը գնահատվում է չեզոք:

Խորհուրդն արձանագրեց, որ ՀՀ տնտեսության զարգացումները նույնպես գնաճային միջավայրի ընդլայնում չեն նախանշում. մասնավոր ծախսումների աճը և հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ոչ գնաճային են:

Խորհուրդն ամփոփեց, որ համաշխարհային և ՀՀ տնտեսությունները զարգանում են ըստ 2012 թվականի առաջին եռամսյակի Դրամավարկային քաղաքականության բազային սցենարի: Ներկայումս իրատեսական է կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում գնաճի ձևավորումը 4% նպատակային ցուցանիշի $\pm$1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում, և այս պահին նպատակահարմար է պահ-

պանել քաղաքականության տոկոսադրույքի 8% մակարդակը, որը գնաճային միջավայրի վրա կթողնի չեզոք ազդեցություն:

Տնտեսության զարգացման նկարագրված միտումների շարունակականության պարագայում կանխատեսվող գնաճը կձևավորվի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին հատվածում: Այս դեպքում խորհուրդը կդիտարկի դրամավարկային պայմանների թուլացման անհրաժեշտությունը:

2012 թվականի մայիսի 8-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները սահմանվում են համապատասխանաբար 11.0% և 5.0%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2012 թ. մարտ*	*2012 թ. մարտի իրական աճի հնդեքսը 2011 թ. մարտի նկատմամբ (%)*	*2012 թ. ապրիլ*	*2012 թ. ապրիլի իրական աճի հնդեքսը 2011 թ. ապրիլի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	106.3[1]	-	107.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	85581.3	112.6	82904.7	112.3
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	700.8	116.1	522.7	89.4
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	27077.6	100.1	38864.1	102.3
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	148075.6	100.1	152786.3	102.5
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	20710.0	89.5	21209.5	95.5
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	74886.1	112.6	73669.5	106.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	117189[2]	102.9	118497[1]	103.2

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների հնդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հնդեքս*	*Գների հնդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	98.6[1]	99.5	101.5
Փետրվար	99.1	104.2	101.2	98.3
Մարտ	100.1	103.1	95.4	98.2
Ապրիլ	99.4	98.6	100.2	98.5
2012 թ. հունվար – ապրիլը 2011 թ. հունվար – ապրիլի համեմատությամբ	103.0	106.2	94.3	103.2

ԳՆԱՃ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]	-0.9	2.6	3.0
Մարտ	0.8	0.8	0.1	2.7	2.2
Ապրիլ	1.3	-0.2	-0.6	2.1	1.9
Մայիս	1.0	0.0			
Հունիս	-0.8	-1.4			
Հուլիս	-0.8	-3.0			
Օգոստոս	1.3	-0.6			
Սեպտեմբեր	-0.2	0.8			
Հոկտեմբեր	1.0	0.3			
Նոյեմբեր	1.6	1.2			
Դեկտեմբեր	1.8	2.5			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7			

ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012թ. ապրիլը 2012 թ. մարտի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**99.4**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**98.7**	**-0.70**
Բանջարեղեն և կարտոֆիլ	92.4	-0.47
Կենդանական և բուսական յուղեր	98.4	-0.05
Կաթնամթերք	99.0	-0.04
Մսամթերք	99.8	-0.03
Շաքարավազ	98.5	-0.02
Միրգ	100.5	0.02
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.9**	**0.14**
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	103.2	0.08
Կոշկեղեն	102.2	0.04
Լվացող միջոցներ	101.3	0.02
Մշակույթի ապրանքներ	97.5	-0.01
Ծառայություններ, որից՝	**100.1**	**0.03**
Տրանսպորտի	100.5	0.02
Հանգստի կազմակերպման	101.3	0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	0.08
Մարտ	1.14	0.82	0.64[4]	0.04
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	0.02
Մայիս	0.41	0.04	0.32[4]	
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	4.91
Մարտ	3.33	7.14	5.68[4]	4.27
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	3.81
Մայիս	3.37	5.92	5.75[4]	
Հունիս	3.36	5.40	6.32[4]	
Հուլիս	3.20	5.16	6.95[4]	
Օգոստոս	3.52	4.96	7.01[4]	
Սեպտեմբեր	3.71	4.86	7.01[4]	
Հոկտեմբեր	4.16	5.53	6.09[4]	
Նոյեմբեր	4.72	6.16	5.37	
Դեկտեմբեր	5.25	6.26	5.29	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**103.81**
Տավարի միս	0.51
Խոզի միս	0.38
Բենզին	0.25
Ծխախոտ «Գառնի»	0.23
Կարամել	0.19
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.19
Հավի բուդ	0.16
Աղացած սև սուրճ	0.13
Պանիր տնական (կովի կաթից)	0.10
Նրբերշիկ	0.10
Եփած երշիկ	0.09
Ձու	0.08
Թթվասեր	0.07
Պղպեղ (սև)	0.07
Մածուն	0.07
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	-0.17

[1] Տվյալները վերահաշվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

[3] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[4] Տվյալները վերահաշվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2012 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար – մարտը 2011 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*2012 թ. հունվար – ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար – ապրիլը 2011 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	347.6	132.5	439.5	117.8
Ներմուծում *(ՍԻՖ)*	956.1	109.9	1311.9	108.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	608.5	100.2	872.4	104.6

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2011 թվական					
	Հունվար-ապրիլ			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	295502	47842	247660	1364892	186441	1178451
ԱՄՆ	35505	33797	1708	138384	145332	-6949
Ուկրաինա	6571	7240	-670	26790	25151	1640
Ղազախստան	6385	965	5419	23407	2274	21133
Գերմանիա	7208	7656	-448	25601	27604	-2003
Իսպանիա	2848	2667	180	9891	10142	-252
Ֆրանսիա	5509	4423	1086	18872	24773	-5901
ԱՄԷ	7385	18634	-11249	19141	57937	-38797
Չինաստան	1179	21737	-20558	3518	83256	-79738
Թուրքիա	973	11026	-10053	6197	36078	-29881
Այլ երկրներ	90694	58681	32013	323341	224558	98783
Ընդամենը	**459758**	**214669**	**245089**	**1960033**	**823547**	**1136486**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2012 թվական					
	Ապրիլ			Հունվար-ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	117935	15790	102144	369067	57846	311221
ԱՄՆ	11547	8718	2829	41627	35722	5905
Ուկրաինա	1427	1437	-10	5626	5228	398
Ղազախստան	1610	138	1471	7217	497	6720
Գերմանիա	1951	2730	-779	8165	11598	-3433
Իսպանիա	509	727	-218	2244	2640	-396
Ֆրանսիա	1417	1971	-554	5318	6347	-1029
ԱՄԷ	1862	3494	-1632	4637	15923	-11286
Չինաստան	470	6030	-5559	1330	19605	-18275
Թուրքիա	104	2231	-2128	1127	9324	-8197
Այլ երկրներ	30543	15609	14935	92872	61133	31738
Ընդամենը	**169374**	**58875**	**110499**	**539230**	**225864**	**313366**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-ապրիլ			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	281767	38910	242858	1295163	141352	1153811
ԱՄՆ	22897	8353	14544	74380	27331	47049
Ուկրաինա	6034	4802	1232	25076	16202	8874
Ղազախստան	6039	657	5382	20611	1769	18842
Գերմանիա	3489	1879	1610	10695	6905	3790
Իսպանիա	2477	930	1547	7674	3052	4622
Ֆրանսիա	3360	1535	1825	10874	7668	3206
ԱՄԷ	909	1789	-879	3387	7660	-4273
Չինաստան	377	1444	-1067	529	8748	-8219
Թուրքիա	158	1793	-1635	2136	4981	-2845
Այլ երկրներ	29538	11199	18339	96434	38934	57499
Ընդամենը	**357046**	**73290**	**283755**	**1546959**	**264602**	**1282357**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Ապրիլ			Հունվար-ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	92062	13824	78238	316712	46397	270315
ԱՄՆ	6256	2026	4231	24804	8294	16510
Ուկրաինա	1229	1189	40	5062	4134	928
Ղազախստան	1498	90	1408	5302	437	4865
Գերմանիա	849	538	311	3375	2788	587
Իսպանիա	497	228	269	2081	810	1271
Ֆրանսիա	824	368	456	3354	1558	1796
ԱՄԷ	1028	589	439	1865	2131	-266
Չինաստան	235	939	-704	331	3056	-2725
Թուրքիա	102	296	-194	562	1115	-554
Այլ երկրներ	6219	2884	3334	24582	13147	11435
Ընդամենը	**110798**	**22970**	**87828**	**388029**	**83868**	**304162**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2011	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.5	125.1	128.3	127.5	126.3	131.7
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.7	211.9	216.5	217.3	221.7	221.0	217.6	221.6
2012	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	135.4	131.0	129.5	127.5								
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	220.5	216.2	215.7	214.3								

[1] Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով: Հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը:


[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ նախնական գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012			
	Դ [3]	Հ [4]	Փ [4]	Մ [5]	Ա
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	**1932.5**	**1730.3**	**1758.1**	**1708.7**	**1687.9**
Համախառն միջազգային պահուստներ	**1932.5**	**1730.3**	**1758.1**	**1708.7**	**1687.9**
Ոսկի	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	57.0	57.6	54.8	54.6	50.0
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1875.4	1672.7	1703.3	1654.1	1638.0

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[4] Տվյալները վերանայվել են:
[5] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012			
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]	Ա
Համախառն արտաքին պարտավորություններ	**754.1**	**763.0**	**770.0**	**769.3**	**765.5**
ԱՄՀ վարկ	518.0	523.8	524.1	522.2	518.6
ՀՓԻ տեղաբաշխում	135.1	136.5	136.9	136.3	136.4
Այլ վարկեր	100.7	101.9	108.3	110.5	110.0
Այլ պարտավորություններ	0.3	0.8	0.6	0.2	0.5

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*


[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	տրամադրված փոխատվություններ	Ընդամենը	Ի վերջին հաշվետվության կետրջրոտ փոխանցումների փոխատվություններ	տրամադրված փոխատվություններ	Ծրագրերի միջոցներ հաշվին	Ծրագրերի վերջնական հաշվին	Ընդամենը	
2011								
Դեկտեմբեր	12953	12953	75721	3418	1	547	79687	**-66735**
2012								
Հունվար	13193	13193	98748	3019	1	549	102316	**-89123**
Փետրվար	12719	12719	97549	3017	1	551	101119	**-88400**
Մարտ	14053	14053	92628	3012	1	554	96195	**-82142**
Ապրիլ	14593	14593	82515	2845	1	556	85917	**-71324**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլրդ ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	Արտարժույթով ավանդներ *(մլրդ ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	Փողի բազմապատկիչ [5]	Դրամայնացման գործակից [6]
2011										
Դեկտեմբեր	671271	349407	164385	513792	145644	659437	467542	1126978	1.68	1.16
2012										
Հունվար	572232	318965	154751	473716	145677	619394	476707	1096101	1.92	1.18
Փետրվար	562946	319511	154705	474216	157250	631466	482181	1113647	1.98	1.22
Մարտ	553757	321270	156682	477951	171903	649855	484507	1134362	2.05	1.25
Ապրիլ	589452	337153	154533	491687	174401	666087	493694	1159781	1.97	1.20

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
700000
630000
560000
490000
420000
350000
280000
210000
140000
70000
0
08
09
10
11
12
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
12
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
45
35
25
15
05
06
07
08
09
10
11
12


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
70
60
50
40
30
05
06
07
08
09
10
11
12


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2011					
Հունվար	468928	283394	397594	488612	879365
Փետրվար	489953	289756	408898	510273	900769
Մարտ	508844	297115	423929	534302	924571
Ապրիլ	516360	301953	430757	538589	942240
Մայիս	512353	305597	436378	548340	967806
Հունիս	537286	306566	442832	557965	984844
Հուլիս	535625	309709	453699	571616	1003282
Օգոստոս	579815	312907	454086	578051	1014568
Սեպտեմբեր	566078	314258	457473	580468	1026427
Հոկտեմբեր	574417	317752	462178	590521	1046747
Նոյեմբեր	582996	319199	466064	597911	1065117
Դեկտեմբեր	604639	321537	477315	616199	1084433
2012					
Հունվար	579873	324411	483183	625076	1096265
Փետրվար	574568	327602	485627	643706	1101894
Մարտ	562330	337773	497615	671762	1129480
Ապրիլ	596544	349555	513541	696509	1167149

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում :
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012			
	Դ [2]	Հ [3]	Փ [3]	Մ [4]	Ա
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***460046***	***374707***	***383279***	***365409***	***358963***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***211224***	***197524***	***179667***	***188349***	***230489***
Կառավարություն	-66735	-89123	-88400	-82142	-71324
Բանկեր	137020	120020	98737	97975	124714
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	46345	28597	6523	11534	43144
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0
Ավանդներ (-)	0	0	0	-7001	-13043
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	140939	166627	169330	172516	177100
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***671271***	***572232***	***562946***	***553757***	***589452***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	398777	360151	359843	361559	378750
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	163177	155780	152186	152842	170621
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	102513	48678	43849	31908	32966
Այլ հաշիվներ	6803	7622	7068	7449	7115
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	6715	7561	7002	7360	7053
Այլ հաշիվներ արտարժույթով	88	61	66	89	62
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-85339***	***8571***	***-17870***	***-6445***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13700***	***-17857***	***8682***	***42140***
Կառավարություն	-	-22388	722	6258	10818
Բանկեր	-	-17000	-21282	-763	26739
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-17749	-22074	5011	31610
ավանդներ (-)	-	0	0	7001	6042
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	25687	2703	3186	4583
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-99039***	***-9286***	***-9188***	***35695***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-38626	-308	1716	17191
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-7397	-3595	656	17779
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-53835	-4829	-11941	1058
Այլ հաշիվներ	-	819	-554	381	-334
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	846	-559	358	-307
Այլ հաշիվներ արտարժույթով	-	-27	5	23	-27
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-18.6***	***2.3***	***-4.7***	***-1.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-6.5***	***-9.0***	***4.8***	***22.4***
Կառավարություն	-	-33.5	0.8	7.1	13.2
Բանկեր	-	-12.4	-17.7	-0.8	27.3
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	18.2	1.6	1.9	2.7
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14.8***	***-1.6***	***-1.6***	***6.4***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-9.7	-0.1	0.5	4.8
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-4.5	-2.3	0.4	11.6
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-52.5	-9.9	-27.2	3.3
Այլ հաշիվներ	-	12.0	-7.3	5.4	-4.5

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] ՀՀ ԿԲ զուտ միջազգային պահուստները վերանայվել են:

[4] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012			
	Դ	Հ [2]	Փ [2]	Մ [2]	Ա [2]
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-422628**	**-378223**	**-387655**	**-412042**	**-444764**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	144795	180008	172105	145581	152729
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-540514	-519958	-525021	-518411	-554908
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-26909	-38273	-34739	-39212	-42585
ԶՆԱ	**1192853**	**1147785**	**1174122**	**1215154**	**1255452**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	64951	60498	53685	68161	64460
Պահանջներ Կառավարության նկատմամբ	147289	143338	136381	149275	148540
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-82338	-82840	-82696	-81113	-84079
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	190864	142343	152216	142581	136785
Պահանջներ ԿԲ նկատմամբ	322531	245320	236071	231791	258348
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-131668	-102977	-83855	-89210	-121563
Տնտեսություն	1249805	1263814	1300739	1338209	1377831
Ջեռնարկություններ	727559	760290	786795	808273	831586
Դրամով	156025	156900	155778	156360	157294
Արտարժույթով	568780	600625	628243	649125	671505
Արժեթղթեր	2754	2766	2774	2789	2788
Տնային տնտեսություններ	484476	458685	469810	484578	499331
Դրամով	313857	312846	317230	326705	335762
Արտարժույթով	170619	145839	152580	157873	163570
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	13864	20588	19289	19072	19793
Դրամով	1383	1612	1566	1517	1505
Արտարժույթով	12481	18975	17723	17555	18288
Այլ ֆինանսական կազմակերպություններ	23907	24251	24844	26286	27121
Դրամով	18570	18620	18657	19535	20174
Արտարժույթով	5337	5631	6187	6751	6947
Զուտ այլ ակտիվներ	-312766	-318871	-332518	-333797	-323624
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	27663	28771	16045	14884	31407
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	9929	1497	1182	1080	1139
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-10087	-1106	-1002	-733	-1287
Ներդրումներ փայաբաժիններում	3007	2283	2332	2186	2137
Միջբանկային պահանջներ	56576	48009	63829	55144	57658
Այլ ակտիվներ	192599	122623	125000	128356	129174
Միջբանկային պարտավորություններ (-)	-55508	-46741	-64987	-56400	-58653
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-5535	-684	-690	-697	-696
Կապիտալ հաշիվներ (-)	-357917	-360503	-356841	-362524	-363209
Այլ պարտավորություններ (-)	-173493	-113020	-117386	-115093	-121295
ԱՎԱՆԴՆԵՐ	**770226**	**769562**	**786467**	**803112**	**810688**
Դրամով ավանդներ	299780	289949	300570	316553	315551
Ցպահանջ ավանդներ	160916	148769	148631	150142	148099
Ժամկետային ավանդներ	138864	141180	151939	166411	167452
Արտարժույթով ավանդներ	470446	479613	485897	486559	495138
Ցպահանջ ավանդներ	124202	118744	126052	122477	130133
Ժամկետային ավանդներ	346244	360870	359845	364082	365005

[1] *2012 թ. հունվարից ֆինանսական կազմակերպությունների նոր հաշվային պլանի ներդրման արդյունքում տեղի են ունեցել որոշակի կառուցվածքային փոփոխություններ:*

[2] *Տվյալները նախնական են:*

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012			
	Դ	Հ [2]	Փ [2]	Մ [2]	Ա [2]
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-38749**	**-39205**	**-38113**	**-39457**	**-41661**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	489	381	544	579	821
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-28751	-29600	-28854	-28607	-30964
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-10487	-9985	-9803	-11429	-11518
ԶՆԱ	**56352**	**54665**	**55028**	**57219**	**59842**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-5859	-6737	-8588	-8596	-7497
Պահանջներ Կառավարության նկատմամբ	1706	1498	1668	1707	1660
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-7565	-8236	-10256	-10303	-9156
Զուտ պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	28649	30269	28046	26463	24705
Պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	34389	38484	36997	36320	34897
Պարտավորություններ ավանդային կազմ-ների նկատմամբ (-)	-5740	-8215	-8950	-9857	-10192
Տնտեսություն	81659	80251	86503	90168	93410
Ձեռնարկություններ	22298	22411	23120	23646	24946
Դրամով	8558	8563	9197	9324	9979
Արտարժույթով	13730	13848	13913	14311	14957
Արժեթղթեր	10	0	10	10	10
Տնային տնտեսություններ	58985	56325	61885	64831	66866
Դրամով	42775	42200	45792	48002	49437
Արտարժույթով	16210	14125	16093	16829	17429
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	102	1307	1400	1404	1407
Դրամով	93	14	98	95	93
Արտարժույթով	10	1294	1302	1309	1314
Այլ ֆինանսական կազմակերպություններ	273	208	98	288	192
Դրամով	269	208	95	285	189
Արտարժույթով	3	0	3	3	3
Զուտ այլ ակտիվներ	-48097	-49118	-50934	-50817	-50778
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	71	45	61	45	47
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0	0	0	0
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	0	0	0	0	0
Ներդրումներ փայաբաժիններում	1678	1678	1678	1678	1678
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	2184	2247	2274	2362	2534
Այլ ակտիվներ	5973	4856	4928	5039	4990
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (-)	-2184	-2247	-2274	-2362	-2534
Թողարկված պարտատոմսեր (-)	-964	-971	-978	-986	-994
Կապիտալ հաշիվներ (-)	-46909	-47195	-49372	-49472	-49219
Այլ պարտավորություններ (-)	-7947	-7531	-7251	-7121	-7280
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**17603**	**15459**	**16915**	**17762**	**18180**
ՀՀ դրամով փոխառություններ	13125	10549	11448	12127	12526
Ցպահանջ փոխառություններ	4	406	408	408	410
Ժամկետային փոխառություններ	13121	10143	11040	11719	12116
Արտարժույթով փոխառություններ	4478	4910	5468	5635	5654
Ցպահանջ փոխառություններ	75	75	46	46	46
Ժամկետային փոխառություններ	4403	4835	5422	5589	5608

[1] 2012թ. հունվարից ֆինանսական կազմակերպությունների նոր հաշվային պլանի ներդրման արդյունքում տեղի են ունեցել որոշակի կառուցվածքային փոփոխություններ:
[3] Տվյալները նախնական են:

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012			
	Դ [6]	Հ [7,8]	Փ [7,8]	Մ [7]	Ա [7]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***-1330***	***-42720***	***-42489***	***-86091***	***-127462***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***1128309***	***1138821***	***1156136***	***1220453***	***1287243***
Կառավարություն	-7643	-35362	-43304	-22577	-14361
Տնտեսություն	1327097	1339990	1385535	1426254	1468810
